

Նախապատրաստում լսումներին. IHSS-ի դադարեցում կամ ժամերի կրճատում

Մայիս 2019թ., Հրապ. #5482 - Armenian

Սույն հրապարակումը կօգնի ձեզ վերանայել և վիճարկել ձեր Տնային օժանդակող ծառայությունների (անգլ. In-Home Supportive Services, IHSS) ժամերի կրճատումը կամ դադարեցումը: Սույն հրապարակումը պարունակում է հետևյալ չորս գործիքը, որոնք կօգնեն ձեզ ստանալ անկողմնակալ լսումներին նախապատրաստվելու համար ձեզ անհրաժեշտ տեղեկատվությունը:

- (1) **Դիմում հիվանդի ֆունկցիոնալ սահմանափակումները փաստող տեղեկատվություն ստանալու համար (Էջեր 9-21) - Այս ձևը լրացվում է ձեր բժշկի օգնությամբ:**
- (2) **Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի համեմատություն (Էջեր 22-24) - Ներկայացնում է ժամային աշխատանքների հաշվարկման ներկայիս և նախկին ուղեցույցների ձևաչափերի տարբերությունները:**
- (3) **IHSS-ի իրավունակության ինքնագնահատման աշխատաթերթ (Էջեր 25-32) - Այս ձևը լրացվում է ձեր IHSS խնամատուհի հետ: Այն օգնում է տեսնել, թե որքան ժամանակ է հարկավոր IHSS-ի յուրաքանչյուր առաջադրանքը կատարելու համար:**
- (4) **IHSS-ի գնահատման չափորոշիչների աշխատաթերթ (Էջեր 33-ից մինչև վերջ) – Այս ձևը լրացնում եք դուք ձեր բժշկին հանդիպելուց և ձեր վարչաշրջանից IHSS գործի թղթապանակի տեղեկատվությունն ստանալուց հետո: Այս աշխատաթերթը օգնում է որոշել ձեր ֆունկցիոնալ ցուցանիշի կարգը:**

(ՆՇՈՒՄ. 25-32 էջերի աշխատաթերթերը մատչելի են ոչ ամբողջությամբ:
Խնդրում ենք կապվել մեզ հետ 1-800-776-5746 հեռախոսահամարով, եթե այդ
աշխատաթերթերը ձեզ անհրաժեշտ են այլ ձևաչափով):

Ի՞նչ տեղեկատվություն է օգտագործում վարչաշրջանը որևէ որոշակի գործառույթ կատարելու իմ կարողությունը որոշելու համար:

IHSS-ի սոցիալական աշխատողը պետք է որոշի, թե ձեզ ինչ չափի օգնություն
է անհրաժեշտ ձեր յուրաքանչյուր գործառույթային (կամ ամենօրյա
կենցաղային գործողությունները) կատարելու համար: Յուրաքանչյուր
գործառույթին հատկացվում է թիվ, որը կոչվում է գործառույթային ցուցանիշի
կարգ: Գործառույթային ցուցանիշի կարգը չափում է, թե անձին ինչ չափի
օգնություն է հարկավոր որոշակի գործառույթային կամ ամենօրյա
կենցաղային գործողություն կատարելու համար: Սոցիալական աշխատողը
յուրաքանչյուր կարգը որոշում է ձեր, ինչպես նաև ուրիշների, օրինակ՝ ձեր
բժշկի, ընտանիքի անդամների, IHSS խնամատու(ներ)ի տրամադրած
տեղեկատվության և սոցիալական աշխատողի կատարած դիտարկումների
հիման վրա՝ ինչ եք կարողանում անել և ինչ չեք կարողանում
անել: Յուրաքանչյուր գործառույթի կարգը պետք է որոշվի ֆիզիկական,
կոգնիտիվ և հուզական տկարության հիման վրա: Կարգը չի սահմանվում
միայն ֆիզիկական սահմանափակումների հիման վրա:

Ո՞ր գործառույթներին է տրվում կարգ:

Վարչաշրջանի սոցիալական աշխատողը պետք է դասակարգի ձեր
գործառույթային գործողությունները հետևյալ ոլորտներից յուրաքանչյուրի
համար.

1. Տնային ծառայություններ (տան գործեր)
2. Լվացք
3. Գնումներ և այլ գործեր
4. Ճաշի պատրաստում/ճաշից հետո մաքրություն
5. Զայլելու կարողություն (նախկինում շարժունակություն ներսում)

6. Լոգանք, բերանի խոռոչի հիգիենիկ խնամք և արտաքին խնամք/Ամենօրյա լվացումներ անկողնում (լոգանք և արտաքին խնամք)
7. Հագնվելու կարողություն/Պրոթեզային սարքեր (հագնելը)
8. Աղիների և միզապարկի խնամք
9. Տեղաշարժում (դիրքի փոփոխում)
10. Ուտելու կարողություն
11. Շնչառություն
12. Հիշողություն
13. Կողմնորոշում և
14. Դատելու կարողություն:

Հիշողելու, կողմնորոշվելու և դատելու կարողությունների միջոցով որոշվում է միայն Պաշտպանիչ վերահսկողության կարիքը:

Ի՞նչպես է վարչաշրջանը որոշում գործառնության ցուցանիշի կարգը:

Ստորև ներկայացված է ընդհանուր չափանիշների ցանկ, որոնք օգտագործվում են յուրաքանչյուր գործառնության կարգը որոշելու համար: IHSS-ի գնահատման չափորոշիչների աշխատաթերթը նույնպես թվարկում է յուրաքանչյուր գործառնության հատուկ չափանիշները: ***Ընդհանուր ստանդարտները պարտադիր են, քանի որ դրանք համարվում են նահանգային կանոնակարգեր:*** Հատուկ ստանդարտները ծառայում են միայն որպես ուղեցույց, քանի որ դրանք ներառված չեն կանոնակարգերում: Այս հրապարակումը որպես հղում ներկայացնում է MPP-ի բաժինների համարները: MPP-ն «Քաղաքականությունների և ընթացակարգերի ձեռնարկն» է: MPP-ները IHSS ծրագրի համար նախատեսված կանոններ են: IHSS ծրագրի կանոնները ներկայացված են MPP-ի 30-700 – 30-785 բաժիններում, որոնք կարելի է գտնել առցանց: [տեսնել կանոնները] Լսումների նահանգային բաժինը նույնպես հետևում է MPP-ի կանոններին: Լսումների նահանգային բաժնի համար նախատեսված կանոնները

Ներկայացված են MPP-ի 22-000 – 22-085 բաժիններում, որոնք կարելի է գտնել առցանց: [\[տեսնել կանոնները\]](#)

Յուրաքանչյուր գործառույթի կարգը պետք է որոշվի **Ֆիզիկական, կոզնիտիվ** և **հուզական** տկարության հիման վրա: Կարգը չի սահմանվում միայն ֆիզիկական սահմանափակումների հիման վրա:

Մտավոր ֆունկցիոնալություն (ուղեղի աշխատանք): Մտավոր ֆունկցիոնալությունը պետք է հաշվի առնվի յուրաքանչյուր գործառույթի կարգը որոշելու դեպքում: Նահանգային IHSS կանոնակարգերը՝ MPP բաժին 30-756.37, սահմանում են մտավոր ֆունկցիոնալության գնահատումը.

MPP բաժին 30-756.371: «Այն, թե որքանով է շահառուի **կոզնիտիվ** և **հուզական** տկարությունը (եթե կա) ազդում նրա [վերոնշյալ] **11 ֆիզիկական գործառույթների** վրա, դասակարգվում **է այդ գործառույթներից յուրաքանչյուրի համար առանձին**: Մարդու կողմից միջամտության մակարդակն ու տեսակը պետք է արտացոլվի յուրաքանչյուր գործառույթի կարգում»

MPP բաժին 30-756.372: «Շահառուի մտավոր գործառույթը **հիշողության, կողմնորոշվելու** և **դատելու** գործառույթների դեպքում պետք է գնահատվի եռաաստիճան սանդղակով (Կարգեր 1, 2, և 5): Սանդղակն օգտագործվում է **պաշտպանիչ վերահսկողության կարիքը որոշելու համար**»:

Հարբժշկական ծառայություններ: Եթե դուք ամբողջ սնունդն ստանում եք զոնդային սնուցման եղանակով, դուք պետք է ստանաք այս ծառայությունը ավելի շուտ որպես հարբժշկական ծառայություն, քան ուտելու, ճաշ պատրաստելու կամ ճաշից հետո մաքրության սպասարկում: Այդ դեպքում, թե՛ ուտելը, թե՛ ճաշի պատրաստումը/ճաշից հետո մաքրումը պետք է դասակարգվեն որպես 1: Տե՛ս MPP բաժին 30-756.4.

Եթե ձեզ անհրաժեշտ է շնչափողահատման և ծծելով քաշելու հետ կապված ինսամբ, դուք պետք է ստանաք այս ծառայությունները ավելի շուտ որպես հարբժշկական ծառայություն, քան որպես շնչառության հետ կապված ծառայություն: Եթե սրանք շնչառության հետ կապված միակ ծառայություններն են, որոնց կարիքը դուք ունեք, շնչառությունը պետք է դասակարգվի որպես 1: Տե՛ս MPP բաժին 30-756.4.

Փոփոխական ֆունկցիոնալություն: Եթե ամսվա ընթացքում ձեր գործառնության կարողությունները փոխվում են, ապա գործառնության դասակարգումը պետք է արտացոլի այն ֆունկցիոնալությունը, որը կրկնվում է վատ զգալու օրերին: Դա կապված չէ միայն «ամենավատ» օրվա ֆունկցիոնալության հետ (օրինակ, եթե արթնիտով հիվանդ եք, կարող եք ունենալ սաստիկ ցավոտ կամ մեղ ցավոտ օրեր: Սոցիալական աշխատողը պետք է որոշի ձեր գործառնության ցուցանիշի կարգերը սաստիկ ցավոտ օրերի քանակությամբ): Տե՛ս MPP բաժին 30-757.1(a)(1).

Գործառնության սահմանափակումների կարգը որոշելու ընդհանուր ստանդարտները ներկայացված են MPP բաժին 30-756.1. Դրանք են.

«Կարգ 1-ին. անկախ է. կարող է կատարել գործառնությոն առանց մարդու օգնության: Չնայած շահառուն հնարավոր է դժվարություն ունենա գործառնությոն կատարելիս, սակայն գործառնությոն կատարումը թե՛ սարքի կամ շարժունակությանն օժանդակող հարմարանքի միջոցով, թե՛ առանց դրանց որևէ էական վտանգ չի ներկայացնում շահառուի անվտանգության համար: Ցանկացած գործառնությոնի համար «1-ին» կարգն ունեցող շահառուին չպետք է թույլատրվի զուգորդվող ծառայության տրամադրում:

Կարգ 2-րդ. ի վիճակի է կատարել գործառնությոն, սակայն ունի խոսքային օժանդակման կարիք, օրինակ՝ հիշեցում, ուղղորդում կամ աջակցություն:

Կարգ 3-րդ. գործառնությոն կարող է որոշակի չափով կատարել մարդու օգնությամբ՝ ներառյալ ինսամատուի կողմից ցուցաբերվող ուղղակի ֆիզիկական աջակցությունը և օժանդակման այլ կարիքները:

Կարգ 4-րդ. կարող է կատարել գործառնությոն, սակայն հիմնականում միայն մարդու կողմից ցուցաբերվող օգնությամբ:

Կարգ 5-րդ. չի կարող կատարել գործառնությոն թե՛ մարդկային օգնությամբ, թե՛ առանց մարդու օգնության»:

Ի՞նչ կարող եմ անել, եթե վարչաշրջանը սխալ է դասակարգել առաջադրանքը:

Դուք կարող եք անմիջապես բողոքարկել ծառայությունների փոփոխման մասին ձեր ստացած ծանուցումը և դիմել լուծման անցկացնելու համար՝ «Նյութական օգնության վճարման հետաձգմամբ»: **Դուք պետք է բողոքարկեք ձեր IHSS ծանուցումը մինչև փոփոխությունը ուժի մեջ մտնելու ակնկալվող ամսաթիվը, որպեսզի ստանաք Նպաստի վճարման սառեցում (անգլ.՝ Aid Paid Pending):** Տե՛ս MPP բաժին 22-072.5. **Aid Paid Pending նշանակում է, որ ձեր ծառայությունների տրամադրումը կշարունակվի առնվազն մինչև լուծմանը:** Եթե դուք ժամանակին պահանջեք նյութական օգնության վճարման հետաձգումը, ձեր ծառայությունների մատուցումը կշարունակվի առանց փոփոխությունների մինչև լուծման որոշման կայացումը:

Եթե ծանուցումն ուշ եք ստանում կամ չեք ստանում ծանուցում, միևնույնն է՝ պետք է անմիջապես բողոքարկեք և խնդրեք նպաստի վճարման սառեցում:

Եթե բաց եք թողել բողոքարկման և նպաստի վճարման սառեցում խնդրելու վերջանաժամկետը, այնուամենայնիվ կարող եք ծանուցումն ստանալու ամսաթվից սկսած 90 օրվա ընթացքում դիմել լուծման համար: Տե՛ս MPP բաժին 22-009.1.

Ի՞նչպես է վարչաշրջանը որոշում ինձ անհրաժեշտ ժամերի քանակը:

Ձեր յուրաքանչյուր գործառույթի դասակարգումը իրականացնելու ժամանակ վարչաշրջանը Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցների (անգլ.՝ Hourly Task Guidelines, HTG) հիման վրա որոշում է, թե որքան ժամանակ կպահանջվի ձեզ անհրաժեշտ յուրաքանչյուր IHSS ծառայությունը կատարելու համար: Ուղեցույցները օգնում են IHSS սոցիալական աշխատողին որոշել, թե որքան ժամանակ պետք է տրամադրվի յուրաքանչյուր IHSS առաջադրանքի կատարման համար: Ուղեցույցները սոցիալական աշխատողներին օգնում են նաև սահմանել այն դեպքերը, երբ պետք է բացառություններ արվեն, որպեսզի կարողանաք ստանալ IHSS-ի յուրաքանչյուր ծառայության կատարման համար անհրաժեշտ ժամանակը:

Ձեր գործառույթային ցուցանիշի դասակարգումների հիման վրա սահմանված առաջադրանքներ կատարելու ձեր ունակությունը հանդիսանում է յուրաքանչյուր առաջադրանքի կատարման ժամաքանակը (IHSS-ի կարիքի ժամեր) որոշելու համար նպաստող, բայց ոչ միակ, գործոնը: Այլ գործոններ են ձեր բնակվելու միջավայրը և ձեր գործառույթային կարողությունների փոփոխումները Տե՛ս MPP բաժին 30-757.1(a)(1).

Դասակարգման համար հաշվի առնվող շատ գործոններ ունեն համապատասխան ժամանակահատված, որը վարչաշրջանը թույլ է տալիս յուրաքանչյուր IHSS առաջադրանքի համար: Ըստ ուղեցույցների՝ IHSS-ի սոցիալական աշխատողը կարող է տրամադրել IHSS-ի առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ ժամանակը: Սակայն եթե ձեզ անհրաժեշտ է ավելի շատ ժամանակ, քան տրամադրվում է Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցներով (HTGs), ձեզ համար հնարավոր է արվի բացառություն, եթե սոցիալական աշխատողը կարողանա հիմնավորել, թե ինչու է ձեզ անհրաժեշտ ավելի շատ ժամանակ առաջադրանքն ավարտելու համար: Աշխատաթերթ թիվ 3-ը, որը IHSS-ի գնահատման չափորոշիչների աշխատաթերթն է, պարունակում է ժամաքանակի հաշվարկման ուղեցույցը, այնպես որ կարիք չկա փնտրել դրանք: Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցները տե՛ս Հավելված Ա-ում: Տե՛ս նաև այն դեպքերը, երբ անհրաժեշտ է լինում բացառություն անել ուղեցույցներով տրամադրվող ծառայությունների ժամաքանակը ավելացնելու կամ պակասեցնելու համար:

Ի՞նչպես եմ լսումներ պահանջում (այսինքն՝ բողոքարկում):

Լսումների համար կարելի է դիմել հետևյալ ձևերից որևէ մեկով.

- 1) Լրացրեք ծանուցման հետևի կողմի ձևաթուղթը և ուղարկեք այն նշված հասցեով
- 2) Ուղարկել նամակ հետևյալ հասցեով՝

IHSS Fair Hearing
State Hearings Division
Department of Social Services
744 P Street, Mail Station 9-17-37
Sacramento, CA 95814

- 3) Ձեր դիմումը ուղարկեք ֆաքսի հետևյալ հեռախոսահամարներով՝ 916-651-5210 կամ 916-651-2789
- 4) Կարող եք զանգահարել՝ 800-743-8525
- 5) Լսումների դիմումը կարող եք ներկայացնել առցանց: [[Դիմել լսումների համար](#)]

Ի՞նչ է պատահում, երբ ես պահանջում եմ լսումներ:

Սոցիալական ապահովության վարչության լսումների նահանգային բաժնից դուք կստանաք երկու ծանուցում: Առաջին ծանուցումը հաստատում է, որ լսումների ձեր դիմումն ընդունվել է: Երկրորդ ծանուցման մեջ նշվում է լսումների անցկացման ամսաթիվը, ժամը և վայրը:

Առաջին ծանուցումն ստանալուց կարճ ժամանակ անց վարչաշրջանը ձեր գործին կկցի բողոքարկման գծով աշխատակցի, որը լսումների ժամանակ վարչաշրջանին ներկայացնող կողմն է: Կարող եք կապվել բողոքարկման աշխատակցի հետ պահանջված լսումների պատճառը քննարկելու համար, և միգուցե կարողանաք լուծել խնդիրը առանց լսումների գնալու: Եթե մինչև լսումների ամսաթիվը ձեր խնդիրը լուծում չի ստանում, լսումներին նախապատրաստվեք նախապես:

Ինչպե՞ս եմ ես պատրաստվում լսումներին:

Քայլ 1 – Ուսումնասիրեք ձեր IHSS-ի գործը

Դուք իրավունք ունեք ուսումնասիրելու ձեր լսումների պահանջին առնչվող IHSS-ի գործում առկա տեղեկատվությունը՝ ՏԵՍ MPP բաժին 22-051.1. Նախքան լսումների ամսաթիվը կարող եք կապվել ձեր IHSS-ի գործով զբաղվող աշխատակցի կամ վարչաշրջանի կողմից կցված բողոքարկումներով զբաղվող աշխատակցի հետ՝ ձեր գործն ուսումնասիրելու հանդիպում նշանակելու համար:

Ձեր IHSS-ի գործից դուրս բերեք ձեր գործառույթային ցուցանիշի կարգը: Ուսումնասիրեք SOC 293 ձևը ձեր գործառույթային ցուցանիշի կարգի մասին տեղեկանալու համար: Եթե SOC 293 ձևը ներառված չէ ձեր գործում, սոցիալական աշխատողը ձեզ համար կարող է տպել այն վարչաշրջանի համակարգչից: Նաև փնտրեք բժշկի կողմից գործառույթային սահմանափակումների մասին լրացված ձևերը և գործով զբաղվող աշխատակցի գրառումները տնային այցերի ժամանակ կատարած դիտարկումների / հարցազրույցների վերաբերյալ:

Քայլ 2 – Հավաքեք տեղեկատվություն

1. Խնդրեք ձեր բժշկին տրամադրել թարմ տեղեկություններ ձեր գործառույթային սահմանափակումների մասին: Դուք և ձեր բժիշկը պետք է ուսումնասիրեք վարչաշրջանին տրամադրված ցանկացած

տեղեկատվություն, ստուգեք դրա ճշտությունը և ուղղեք սխալները: Ձեր բժիշկը պետք է բացատրի նաև ձեր հիվանդության փոփոխությունները: Եթե ձեր առողջական վիճակն օրեցօր փոխվում է, ձեր բժիշկը պետք է սահմանի ձեր կարգերը՝ հիմնվելով ձեր վատ զգացած օրերի վրա: Այս տեղեկատվությունը ձեր բժիշկը պետք է տրամադրի՝ օգտագործելով Աշխատաթերթ թիվ 1-ը (***Դիմում Յիվանդի գործառնության սահմանափակումները փաստող տեղեկատվություն ստանալու համար***):

2. Որոշեք, թե որքան ժամանակ է ձեզ հարկավոր յուրաքանչյուր IHSS ծառայությունը կատարելու համար՝ լրացնելով Աշխատաթերթ թիվ 2-ը, ***IHSS-ի համապատասխանության ինքնուրույն գնահատման աշխատաթերթ***:
3. Լրացնելով Աշխատաթերթ թիվ 3-ը՝ IHSS-ի գնահատման չափորոշիչների աշխատաթերթը, որպեսզի մանրամասն նշեք ինչնամբի ձեր կարիքները և դրանք ներկայացնեք լսումների ժամանակ:

Քայլ 3 – Ուսումնասիրեք վարչաշրջանի դիրքորոշման մասին տեղեկատվությունը:

Ինչպե՞ս օգտագործել Աշխատաթերթ թիվ 2-ը՝ IHSS-ի համապատասխանության ինքնուրույն գնահատման աշխատաթերթը:

Յուրաքանչյուր առաջադրանքի կատարման համար ձեզ անհրաժեշտ ժամաքանակի մասին նշելու համար գրանցեք առաջադրանքն սկսելու ժամանակը, ավարտման ժամանակը և յուրաքանչյուր ծառայության համար ձեզ անհրաժեշտ ընդհանուր ժամերի ու րոպեների քանակը: Հիշեք և գրանցեք, եթե գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցով թույլատրվող ժամերից ավել ժամեր են ձեզ անհրաժեշտ և բացատրեք ինչու: Պետք է լրացնեք այս աղյուսակը, որպեսզի պատշաճ ձևով պատրաստվեք լսումներին: Լրացնելուց հետո ձեր ինքուրույն գնահատումը հանդիսանում է ձեր ապացույցն այն մասին, թե որքան ժամանակ է անհրաժեշտ յուրաքանչյուր IHSS ծառայությունը կատարելու համար, որոնց համար ձեզ պետք է օգնություն:

Եթե պետք է գնաք լսումների և կանգնած եք վարչական գործերով դատավորի առջև կամ փորձում եք բանակցել վարչաշրջանի լսումների գծով

Ներկայացուցչի հետ, պետք է ներկայացնեք հավաստի ապացույց (օր.՝ IHSS-ի համապատասխանության ինքնուրույն գնահատման աշխատաթերթը) այն մասին, թե որքան ժամանակ կպահանջվի ձեզ համար ձեզ անհրաժեշտ յուրաքանչյուր IHSS ծառայությունն ստանալու համար: Լսումների ժամանակ ձեզ հարկավոր յուրաքանչյուր ծառայությունն ստանալու համար անհրաժեշտ ժամանակաքանակը գուշակելը և հաշվարկելը չի օգնի ձեզ: Դա այն պատճառով է, որ դուք ունեք այնքան ժամանակի իրավունք, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր IHSS ծառայությունը կատարելու համար, որոնց դեպքում ձեզ օգնություն է պետք: Դուք չունեք հաշվարկված ժամանակի կամ այն ժամանակի իրավունքը, որը ձեր կարծիքով կամ գուշակելով անհրաժեշտ է ձեզ յուրաքանչյուր IHSS ծառայությունը կատարելու համար:

Ինչպե՞ս օգտագործել Աշխատաթերթ թիվ 3-ը՝ IHSS-ի համապատասխանության ինքնուրույն գնահատման աշխատաթերթը.

Քայլ 1 – Աշխատաթերթ թիվ 3-ում ստուգեք յուրաքանչյուր գործառույթի համապատասխան կարգը, ինչպես սահմանել է ձեր բժիշկը: Դա անելու համար ձեր գործառույթային սահմանափակումների մասին տեղեկատվությունը Աշխատաթերթ թիվ 1-ից (***Դիմում հիվանդի գործառույթային սահմանափակումները փաստող տեղեկատվություն ստանալու համար***) փոխանցեք Աշխատաթերթ թիվ 3 (***IHSS-ի գնահատման չափորոշիչների աշխատաթերթ***):

Քայլ 2 – Գրանցեք, թե որքան ժամանակ է ձեզ անհրաժեշտ յուրաքանչյուր IHSS ծառայության կատարման համար, որոնց դեպքում ձեզ անհրաժեշտ է օգնություն: Դա անելու համար պետք է յուրաքանչյուր IHSS ծառայությունը կատարելու համար ձեզ անհրաժեշտ ժամաքանակի մասին տեղեկատվությունը Աշխատաթերթ թիվ 2-ից (***IHSS-ի համապատասխանության ինքնուրույն գնահատման աշխատաթերթ***) փոխանցել Աշխատաթերթ թիվ 3 (***IHSS-ի գնահատման չափորոշիչների աշխատաթերթ***): Եթե ձեզ անհրաժեշտ է ավելի շատ ժամանակ, քան այն, որ թույլատրվում է ձեր կարգի հիման վրա, նշեք «Այո» վանդակում և բացատրեք, թե ինչու է ձեզ անհրաժեշտ լրացուցիչ ժամանակ:

1.

Դիմում Հիվանդի գործառույթային սահմանափակումները փաստող տեղեկատվություն ստանալու համար Գործառույթային սահմանափակումներ

Ձեր հիվանդը դիմել է Տեսային օժանդակող ծառայություններ (IHSS) ստանալու համար կամ ստանում է IHSS ծառայություններ: IHSS ծրագրով տրամադրվում են այցելող խնամակալի ծառայություններ այն մարդկանց տանը, ովքեր իրենց համար չեն կարողանում կատարել որոշակի առաջադրանքներ (օր. առօրյա կենցաղային գործեր), որպեսզի նրանք շարունակեն բնակվել տանը: IHSS ծրագրով թույլատրելի ծառայությունները թվարկված են Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության վարչության Քաղաքականությունների ու ընթացակարգերի ձեռնարկում (MPP)՝ սկսած բաժին 30-757-ից:

IHSS ծրագրի աշխատակազմին անհրաժեշտ է իմանալ, թե որոնք են ձեր հիվանդի գործառույթային սահմանափակումները, և ինչպես են ձեր հիվանդի սահմանափակումներն ազդում առօրյա կենցաղային գործերը կատարելու նրա կարողության վրա, որպեսզի որոշենք, թե ամսական որքան ժամաքանակ կարելի է թույլատրել այցելող խնամակալի ծառայությունների համար (օրինակ չի կարողանում կատարել տնային գործեր քայլելու, թևերն ու դաստակներն օգտագործելու անկարողության պատճառով):

Խնդրում ենք լրացնել հետևյալ ձևը՝ ձեր հիվանդի գործառույթային սահմանափակումները փաստելու համար:

Շահառուի անուն՝ _____

Ծննդյան ամսաթիվ՝ _____

Ախտորոշում՝ _____

Կանխատեսում՝ _____

Ամսաթիվ, երբ վերջին անգամ տեսել եք հիվանդին՝ _____

Գործառույթային սահմանափակումներ

Խնդրում ենք թվարկել ձեր հիվանդի գործառույթային սահմանափակումները (օրինակ՝ շնչելու, տեսնելու, լսելու, քայլելու, կանգնելու, կռանալու, ձեռքը մեկնելու, բռնելու, տանելու, նստելու, շրջվելու սահմանափակումներ, թևերի կամ ոտքերի թուլություն, վերջույթներն օգտագործելու հնարավորության կորուստ, դիմադրողականության անկում, հոգնածություն և այլն):

Գործառույթային սահմանափակումների գնահատում

Խնդրում ենք կատարել նշում համապատասխան վանդակում (յուրաքանչյուր առաջադրանքի համար նշել միայն մեկ վանդակ):

Տնային ծառայություններ (տան գործեր)՝ MPP բաժին 30-757.11

Տան հավաքում, փոշեկուլով մաքրում և հատակների լվացում, խոհանոցային սեղանների ու լվացարանների լվացում, լոգասենյակի լվացում, սննդի և այլ պարագաների պահուստավորում, աղբի թափում, փոշու մաքրում, ջեռոցի և սալօջախի մաքրում, սառնարանի մաքրում և ապաստառեցում, բակի վառելիքի բաքից վառելիքի բերում տուն ջեռուլցման կամ ճաշ պատրաստելու նպատակով, անկողնու սպիտակեղենի փոխում:

- Անկախ. կարող է կատարել տնային գործեր առանց առողջությանը կամ անվտանգությանը վտանգ սպառնալու:
- Կարող է կատարել գործեր, սակայն ունի մեկ այլ անձի ուղղություն ցույց տալու կամ օգնության կարիքը:
- Որոշ գործերի համար ունի մեկ այլ անձի կողմից ֆիզիկապես օգնություն ստանալու կարիք, օր.՝ դիմացկունությունը սահմանափակ է կամ ունի կռանալու, թեքվելու, ինչ-որ բանի հասնելու սահմանափակումներ և այլն:

- Չնայած կարող է կատարել մի քանի գործեր (օր.՝ կահույքի փոշու մաքրում կամ սեղանների սրբում), սակայն շատ գործերի համար անհրաժեշտ է մեկ այլ անձի օգնությունը:
- Բոլոր տնային գործերի համար ամբողջովին կախված է ուրիշներից:

Խնդրում ենք համառոտ նկարագրել, թե ձեր հիվանդի գործառնության համար սահմանափակումներն ինչպես են ազդում տնային գործեր անելու նրա կարողության վրա.

Լվացք. MPP բաժին 30-757.134

Լվացքի մեքենայից օգտվելու, տեսակավորելու, օճառի տարաներից օգտվելու, լվացքի մեքենայի ներսից օգտվելու, թաց լվացքը մշակելու, մեքենայի կոճակներից օգտվելու, լվացքը փռելու, ծալելու և տեսակավորելու կարողություններ: Արդուկել պահանջող հագուստներն արդուկելու կարողությունը դասակարգվել է որպես այս գործառնության մասը միայն այն պատճառով, որ դա պահանջվում է անձի հիվանդության հետևանքով, օր.՝ պառկելախոցի առաջացումը կանխելու կամ աշխատանք ունեցող շահառուների համար, ովքեր չունեն արդուկ չպահանջող հագուստեղեն:

- Անկախ. կարող է կատարել բոլոր գործերը:
- Ունի օգնության կարիք շատ առաջադրանքների համար: Միգուցե կարողանա կատարել լվացքի հետ կապված որոշ գործեր, օր.՝ ձեռքով լվանալ անձնական սպիտակեղենը, ծալել և(կամ) դասավորել հագուստն ինքնուրույն կամ հսկողության տակ:
- Չի կարող կատարել ոչ մի գործ: Ամբողջովին կախված է մեկ այլ անձի օգնությունից:

Խնդրում ենք համառոտ նկարագրել, թե ձեր հիվանդի գործառնության
սահմանափակումներն ինչպես են ազդում լվացք անելու նրա կարողության
վրա.

Գնումներ և այլ գործեր. MPP բաժին 30-757.135

Կազմել գնումների ցուցակ, թեքվել, վերցնել և բարձրացնել, քշել գնումների
սայլակը կամ կրել զամբյուղը, գտնել անհրաժեշտ ապրանքները, տանել
ապրանքները տուն, դասավորել ապրանքները, զանգել և գրի առնել
նշանակումները և հագուստ գնել:

- Անկախ. Կարող է կատարել բոլոր գործերն առանց օգնության:
- Ունի մեկ այլ անձի օգնության կարիքը որոշ գործեր անելու համար, օր.[՝]
օգնություն հիմնական գնումների ժամանակ, սակայն փոքր գնումների
համար կարող է գնալ մոտակա խանութ, կամ ունի ուղղորդման կամ
հրահանգավորման կարիք:
- Ի վիճակի չէ ինքնուրույն գործեր կատարել:

Խնդրում ենք համառոտ նկարագրել, թե ձեր հիվանդի գործառնության
սահմանափակումներն ինչպես են ազդում նրա գնումներ և այլ գործեր
կատարելու կարողության վրա.

Ճաշի պատրաստում և մաքրություն ճաշից հետո MPP բաժիններ 30-757.131 & 30-757.132

Ճաշացանկերի կազմում Լվանալ, մաքրել, կտրտել բանջարեղենը, բացել փաթեթավորումները, բանկաներն ու տոպրակները, խառնել բաղադրիչները, բարձրացնել թավաներն ու կաթսաները, տաքացնել սնունդը, եփել, անվտանգ կերպով օգտվել սալօջախից, պատրաստել սեղանը, մատուցել ճաշը, սնունդը կտրտել կծելու համար հարմար չափսերով կտորների: Լվանալ և չորացնել ամանները և դասավորել դրանք:

- Անկախ. Կարող է պլանավորել, պատրաստել, մատուցել ճաշերը և մաքրել ուտելուց հետո:
- Ճաշացանկերը կազմելիս, ճաշերը պատրաստելիս և(կամ) ուտելուց հետո մաքրելիս ունի միայն հուշելու կամ ուղղորդելու կարիք:
- Ունի մեկ այլ անձի կարիքը գրեթե ամեն օր հիմնական ճաշ(եր)ը պատրաստելու և ճաշից հետո մաքրելու համար, օր. կարող է տաքացնել մեկ ուրիշի պատրաստած ճաշերը և(կամ) գրեթե ամեն օր ունի օգնության կարիք ճաշից հետո հավաքելու և մաքրելու համար:
- Ունի մեկ այլ անձի կարիքը ամեն օր հիմնական ճաշ(եր)ը պատրաստելու և ճաշից հետո մաքրելու համար:
- Բոլոր ճաշերը պատրաստելու, այնուհետև մաքրություն անելու համար ամբողջովին կախված է մեկ այլ անձից:
- Սնվում է զոնդով: (խնդրում ենք լրացնել հարբժշկական ծառայությունների գնահատման ձևը) *

Խնդրում ենք համառոտ նկարագրել, թե ձեր հիվանդի գործառնության խնդիրներն սահմանափակումներն ինչպես են ազդում ճաշ պատրաստելու և ճաշից հետո մաքրություն անելու նրա կարողության վրա.

Քայլելու կարողություն (նախկինում՝ շարժունակություն ներսում). MPP բաժին 30-757.14(k)

Քայլել կամ տեղաշարժվել տան ներսում, սենյակում փոխել տեղը, սենյակից սենյակ գնալ: Կարող է ադեկվատ կերպով պատասխանել, եթե սայթաքում կամ ընկնում է: Կարող է շրջանցել ընդհանի կենդանիներին կամ խոչընդոտները, այդ թվում՝ հատակի անհարթ մակերեսները: Բաժրանալ կամ իջնել աստիճաններով, եթե աստիճանները տան ներսում են: Չի վերաբերում փոխադրումներին, նպատակակետին հասնելուց հետո կարողություններին ու կարիքներին, տանից դուրս կամ ներս գալու կարողությանը կամ դրսում տան շուրջը տեղաշարժվելուն:

- Անկախ. Չունի ֆիզիկական օգնության կարիք, չնայած շահառուն կարող է զգալ որոշակի դժվարություն կամ անհարմարություն: Առաջադրանքի կատարումը նրա անվտանգությունը վտանգի չի ենթարկում:
- Կարող է տեղաշարժվել անկախ, ունի միայն հիշեցնելու կամ աջակցություն ստանալու կարիք: Օրինակ՝ անհրաժեշտ է հիշեցնել կողպել դռան բռնակը, ապաբլոկավորել անվասայլակը կամ օգտագործել ձեռնափայտ կամ քայլակ:
- Ունի մեկ այլ անձի օգնության կարիքը հատուկ մանևրումներ կատարելու համար, օր.՝ անվասայլակը սուր անկյան շուրջը հրելը, աստիճաններով բարձրացնելը կամ որոշակի մակերեսներով քշելը:
- Ընդհանուր առմամբ ունի մեկ այլ անձի օգնության կարիքը: Վտանգի տակ է, եթե մնա առանց օգնության:
- Տեղաշարժման համար ամբողջովին կախված է ուրիշներից: Անվասայլակում կամ բժշկական սայլակում մշտապես պետք է տանել, բարձրացնել կամ հրել:

Խնդրում ենք համառոտ նկարագրել, թե ձեր հիվանդի գործառնությանին սահմանափակումներն ինչպես են սահմանափակում ձեր հիվանդի շարժունակությունը.

Լոգանք, բերանի խոռոչի հիգիենա և արտաքին հարդարում, ամենօրյա լվացումներ անկողնում.

MPP բաժիններ 30-757.14 (d) և 30-757.14 (e)

Լոգանք նշանակում է մաքրել մարմինը լոգարանում, ցնցուղի տակ կամ լոգանքի սպունգով, այդ թվում՝ լոգարանը լցնել ջրով, օգտվել ծորակներից, մտնել լոգարանի մեջ կամ դուրս գալ, օճառել գլուխը կամ մարմնի մասերը, լվանալ և չորացնել: Արտաքին խնամքը ներառում է մազերի սանրումը և ատամների մաքրումը խոզանակով, շամպունով լվացումը, բերանի խոռոչի հիգիենան, սափրումը և ձեռքի և ոտքի մատների եղունգների խնամքը (եթե ոտքերի եղունգների խնամքը բժշկական տեսանկյունից հակացուցված չէ և այդ պատճառով գնահատվում է որպես հարբժշկական ծառայություն): ՆՇՈԻՄ. Լոգանքի սենյակ գնալը և այնտեղից դուրս գալը գնահատվում է որպես Շարժունակություն ներսում:

- Անկախ. Ի վիճակի է լողանալ և հարդարել արտաքինը ինքուրույն՝ առանց այլ անձի օգնության:
- Ի վիճակի է լոգանք ընդունել և հարդարվել ինքուրույն՝ ուղղորդման կամ պարբերական վերահսկողության ներքո: Կարող է ունենալ անձնական հիգիենան պահպանելու հիշեցման կարիք:
- Ընդհանուր առմամբ կարող է ինքուրույն լոգանք ընդունել և հարդարվել, սակայն մարմնի որոշ հատվածների խնամքի համար ունի օգնության կարիք, օր.՝ մտնել լոգախցիկ կամ լոգարան և դուրս գալ, շամպունել մազերը, կամ կարող է լողանալ սպունգով, սակայն մեկ ուրիշը պետք է բերի ջուրը, օճառը, սրբիչը և այլն:
- Մեծ մասամբ ունի ուղղակի աջակցության կարիք լոգանք ընդունելիս կամ հարդարվելիս: Մենակ մնալու դեպքում կարող է վտանգի տակ լինել:

- Լոգանք ընդունելու և հարդարվելու համար ամբողջովին կախված է ուրիշներից:

Խնդրում ենք համառոտ նկարագրել, թե ձեր հիվանդի գործառնությանը սահմանափակումներն ինչպես են ազդում լոգանք ընդունելու, բերանի խոռոչի հիգիենան պահպանելու և հարդարվելու նրա կարողության վրա.

Հագնվելու կարողություն. MPP բաժին 30-757.14 (f)

Հագնել և հանել հագուստները, կոճկել արտաքին հագուստը և ներքնահագուստը կամ քանդել կոճակները, հագնել հատուկ սարքերը, օրինակ մեջքի կամ ոտքերի օրթեգները, կորսետները, Էլաստիկ գուլգագուլպաները/արտաքին հագուստը և ստորին ու վերին վերջույթների պրոթեզները:

- Անկախ. Ի վիճակի է հագնել, ամրացնել կամ հանել բոլոր տեսակի հագուստներն ու սարքերն առանց օգնության: Հագնվում է ինքուրույն՝ չվնասելով առողջությանն ու անվտանգությանը:
- Ի վիճակի է ինքնուրույն հագնվելու, սակայն ունի հագուստի ընտրության հարցում հիշեցնելու կամ ուղղություն ցույց տալու կարիք:
- Ի վիճակի չէ ինքնուրույն ամբողջովին հագնվել՝ առանց մեկ այլ անձի օգնության, օր. կապել կոշիկի կապերը, կոճկվել, օգտագործել ճարմանդը, ամրացնել տաբատը կամ պրոթեզային սեղմակը և այլն:
- Ի վիճակի չէ հագնել հագուստի պարագաների մեծ մասն ինքնուրույն: Առանց օգնության կհզանվի ոչ համապատասխան կամ ոչ ադեկվատ կերպով:
- Ընդհանրապես ի վիճակի չէ ինքնուրույն հագնվել: Ունի մեկ ուրիշի լիարժեք օգնության կարիքը:

Խնդրում ենք համառոտ նկարագրել, թե ձեր հիվանդի գործառույթային սահմանափակումներն ինչպես են ազդում նրա հազնվելու կարողության վրա.

**Աղիների, միզապարկի և դաշտանային խնամք. MPP
բաժիններ 30-757.14(a) և 30--757.14(j)**

Օգնել անձին հասնել զուգարան և հետ գալ, նստել զուգարանակոնքին կամ աթոռ-զուգարանին և վեր կենալ և դատարկել աթոռ-զուգարանը, հանել հագուստը և սրբել ու մաքրել մարմինը զուգարանից օգտվելուց հետո, օգնել օգտվել գիշերանոթներից և դատարկել դրանք, դատարկել ստոման և/կամ կաթետրային ընկալիչներն ու մեզընդունիչները, օգտագործել տակդիրներ և ներքևակի մեկանգամյա օգտագործման միջադիր: Դաշտանային խնամքը սահմանափակվում է հիգիենիկ միջադիրի օգտագործմամբ և մաքրմամբ: (ՆՇՈԻՄ. կաթետրի տեղադրման, ստոմայի դատարկման և աղիների ծրագիրը գնահատվում է որպես հարթշկական ծառայություններ*: Լոգանքի սենյակ գնալը և այնտեղից դուրս գալը գնահատվում է որպես Շարժունակություն ներսում):

- Անկախ. Ի վիճակի է կատարել աղիների, միզապարկի և դաշտանային խնամք առանց մեկ այլ անձի օգնության:
- Ունի միայն հիշեցման կամ ուղղություն ցույց տալու կարիք:
- Ունի նվազագույն օգնության կարիք որոշ գործողությունների համար, սակայն խնամատուհի մշտական ներկայության անհրաժեշտությունը չկա:
- Ի վիճակի չէ կատարել գործողությունների մեծ մասն առանց օգնության:
- Ունի ֆիզիկական օգնության կարիք խնամքի բոլոր տեսակների համար:

Խնդրում ենք համառոտ նկարագրել, թե ձեր հիվանդի գործառնության
սահմանափակումներն ինչպես են ազդում աղիների, միզապարկի և
դաշտանային խնամք կատարելու նրա կարողության վրա.

Տեղաշարժումներ. MPP բաժին 30-757.14(h)

Նստած կամ պառկած մեկ դիրքից նստելու կամ պառկելու մեկ այլ դիրքի
տեղափոխվելը, օր.՝ մահճակալից և անվասայլակից կամ բազմոցից կանգնելը
և/կամ դիրքի փոփոխումը՝ մաշկի վնասումը կանխելու համար (ՆՇՈՒՄ. եթե
գոյացել են պառկելախոցեր, դրանց խնամքի անհրաժեշտությունը
գնահատվում է որպես հարբժշկական ծառայություն):

- Անկախ. Ի վիճակի է անվտանգ կերպով կատարել բոլոր
տեղաշարժումները, առանց որևէ այլ անձի օգնության:
- Կարող է տեղաշարժվել, սակայն ունի աջակցության կամ ուղղություն
ցույց տալու կարիք:
- Ունի մեկ այլ անձի որոշակի օգնության կարիքը, օր.՝ ամեն օր ունի
օգնության կամ աջակցելու կարիք դիրքափոխման համար:
- Ի վիճակի չէ կատարել տեղաշարժումների մեծ մասը առանց
ֆիզիկական օգնության: Առանց օգնության մնալու դեպքում կարող է
վտանգի տակ լինել:
- Տեղաշարժումների համար ամբողջովին կախված է մեկ այլ անձից:
Պետք է բարձրացնեն կամ մեխանիկորեն տեղափոխեն:

Խնդրում ենք համառոտ նկարագրել, թե ձեր հիվանդի գործառնության
սահմանափակումներն ինչպես են ազդում տեղաշարժվելու նրա կարողության
վրա.

Սննդի ընդունում. MPP բաժին 30-757.14(c)

Ձեռքը երկարել, վերցնել, բռնել սպասքը և բաժակը, ուտելիքը լցնել ափսեի մեջ, ուտելիքը, սպասքը, բաժակը մոտեցնել բերանին, ծամել, կուլ տալ սնունդն ու հեղուկները, ուտելիքը ափսեում կտրատել: Անհրաժեշտության դեպքում, ուտելուց հետո մաքրել դեմքը և ձեռքերը:

- Անկախ. Ինքնուրույն կարող է սնվել:
- Կարող է սնվել ինքնուրույն, սակայն ունի բանավոր խոսքով օժանդակման, օրինակ ուտելու մասին հիշեցնելու կամ օգնելու կարիք:
- Ունի օգնության կարիք ուտելու ժամանակ, օր. օժանդակ սարքի հանգնելը, ըմպելիքի վերցնելը կամ սեղանին դրված ուտելիքից ավելացնելը և այլն, սակայն մեկ այլ անձի մշտական ներկայությունն չի պահանջվում:
- Ի վիճակի է ինքնուրույն ուտել որոշ ուտելիքներ, սակայն չի կարողանում պահել սպասքը, բաժակները, գավաթները և այլն, և պահանջվում է մեկ այլ անձի մշտական ներկայությունը:
- Ընդհանրապես ի վիճակի չէ սնվել ինքնուրույն և ամբողջովին կախված է մեկ այլ անձի օժանդակությունից:
- Սնվում է զոնդով: Չոնդով սնվելու բոլոր ասպեկտները գնահատվում են որպես հարթժկական ծառայություն:*

Խնդրում ենք համառոտ նկարագրել, թե ձեր հիվանդի գործառնության սահմանափակումներն ինչպես են ազդում նրա ինքնուրույն սնվելու կարողության վրա.

Շնչառություն. MPP բաժին 30-757.14(b)

Շնչառությունը սահմանափակ է և կատարվում է ոչ բժշկական ծառայությունների օգնությամբ, ինչպիսիք են օգնություն թթվածինն ինքնուրույն ընդունելու և թթվածնային սարքի ու IPPB մեքենաների մաքրման համար:

- Չի օգտագործում շնչառական դիմակ կամ թթվածնի ընդունման այլ սարք կամ ի վիճակ է ինքնուրույն օգտագործել կամ մաքրել դրանք:
- Ունի շնչառական սարքերն ինքուրույն օգտագործելու և(կամ) մաքրելու օգնության կարիք:
- Ունի հարբժշկական ծառայությունների կարիք, օրինակ ներծծելը:*

Խնդրում ենք համառոտ նկարագրել, թե ձեր հիվանդի գործառնության ին սահմանափակումներն ինչպես են ազդում նրա շնչելու կարողության վրա.

Մտավոր կարողությունների գնահատում

Խնդրում ենք կատարել նշում համապատասխան վանդակում (մտավոր կարողությունների յուրաքանչյուր սահմանափակման համար նշեք միայն մեկ վանդակ):

- Յիշողություն Յուրացրած վարքագծի և հեռավոր անցյալի ու վերջին շրջանի տեղեկատվության մտաբերում:
- Խնդիր չկա. Յիշողությունը հստակ է, շահառուն ի վիճակի է տրամադրել ճշգրիտ տեղեկատվություն իր հիվանդությունների պատմության մասին, համապատասխանաբար կարող է խոսել ավելի վաղ գրույցում արված մեկնաբանությունների շուրջ, լավ վերհիշում է անցյալի իրադարձությունները:
- Յիշողության կորուստը մեղմ է կամ ընդհատումներով է. Շահառուն ցույց է տալիս հիշողության տկարության որոշակի նշաններ, սակայն ոչ այն չափով, որը նրան վտանգի ենթարկի, ժամանակ առ ժամանակ շահառուն ունի առօրյա գործերն անելու մասին հիշեցնելու կամ անցյալի իրադարձությունները վերհիշելու օգնության կարիք:
- Յիշողության զգալի պակաս. Շահառուն մոռանում է սկսել կամ ավարտել ամենօրյա կենցաղային գործողությունները, որոնք կարևոր են նրա առողջության և/կամ անվտանգության համար: Չրույցում չի կարողանում պահպանել մտքի շարունակականությունը:

Խնդրում ենք համառոտ նկարագրել, թե ձեր հիվանդի հիշողության սահմանափակումներն ինչպես են ազդում նրա ամենօրյա կենցաղային գործեր կատարելու կարողության վրա.

Կողմնորոշում. Որևէ միջավայրում ժամանակի, վայրի, սեփական անձի կամ այլ անձանց իմացություն:

- Խնդիր չկա. Կողմնորոշումը հստակ է: Շահառուն տեղյակ է, թե որտեղ է գտնվում և կարող է տալ հուսալի տեղեկատվություն, երբ հարցնեք առօրյա կենցաղային գործերի, ընտանիքի և այլնի մասին, ունի օրվա մեջ ժամանակի զգացողություն:

- Հազվադեպ ապակողմնորոշումն ու շփոթությունն ակնհայտ են, սակայն նրան վտանգի չեն ենթարկում. շահառուն ունի օրվա մեջ ժամանակի ընդհանուր զգացողություն, կարող է տրամադրել սահմանափակ տեղեկությունների ընտանիքի, ընկերների, առօրյա գործերի և այլնի մասին:
- Լուրջ ապակողմնորոշում, որը շահառուին վտանգում է. թափառում է, չունի անվտանգության կամ լավ ինքնազգացողության գիտակցում կամ մտահոգություն, ի վիճակի չէ ճանաչել ուրիշներին կամ ապահով կերպով վերաբերվել միջավայրին կամ իրավիճակին, չունի օրվա մեջ ժամանակի զգացողություն:

Խնդրում ենք համառոտ նկարագրել, թե՞ ձեր հիվանդի կողմնորոշման սահմանափակումներն ինչպես են ազդում նրա ամենօրյա կենցաղային գործեր կատարելու կարողության վրա.

Դատելու կարողություն. Կայացնել որոշումներն այնպես, որ սեփական անձը կամ գույքը վտանգի չենթարկվեն, անվտանգություն սալօջախի մոտ: Միջավայրի փոփոխություններին արձագանքելու կարողություն, օր. հրդեհ, ցուրտ տուն: Հասկանում է այլընտրանքները և ռիսկերը և ընդունում է որոշումների հետևանքները:

- Դատելու կարողությունը նորմալ է. Ի վիճակի է գնահատել միջավայրի ազդակները և արձագանքել համապատասխանաբար:
- Դատելու կարողությունը որոշակիորեն թույլ է. ցույց է տալիս սեփական անձի համար պլանավորման կարողության պակաս, ունի այլընտրանքների միջև որոշում կայացնելու դժվարություն, սակայն լսում է խորհուրդներ, սոցիալական դատողությունը թույլ է:

- Դատելու կարողության հետ լուրջ խնդիրներ ունի. չի կարողանում որոշումներ կայացնել կամ կայացնում է որոշումներն առանց անվտանգությունը կամ ինքնազգացողությունը հաշվի առնելու:

Խնդրում ենք համառոտ նկարագրել, թե ձեր հիվանդի դատելու կարողության սահմանափակումներն ինչպես են ազդում նրա ամենօրյա կենցաղային գործեր կատարելու կարողության վրա.

***Եթե հիվանդի համար պահանջվում են հարբժշկական ծառայություններ, խնդրում ենք լրացնել SOC 321 ձևը:**

Ես հավաստում եմ, որ ես լիցենզավորված եմ Կալիֆորնիա նահանգում բժշկությամբ զբաղվելու համար և որ վերևում տրամադրված տեղեկատվությունը ճիշտ է:

Մասնագետի ստորագրություն՝

Անունը տպատառերով՝

Ամսաթիվ՝ _____

Բժշկական մասնագիտացում՝ _____

Չացե՛ք՝ _____

Արտոնագիր թիվ՝ _____

Քաղաք՝ _____ Նահանգ՝ _____

Չեռախոս՝ _____

2.

Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի համեմատում

Ի՞նչ է Գործերի Ժամաքանակի հաշվարկման ուղեցույցը:

Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցները (HTGs) գործիք են, որոնց միջոցով IHSS-ի սոցիալական աշխատողները որոշում են, թե որքան ժամ պետք է տրամադրվի յուրաքանչյուր առաջադրանքի համար:

Յուրաքանչյուր առաջադրանքի և յուրաքանչյուր գործառույթային ցուցանիշի կարգի համար ուղեցույցներով հաշվարկվող ժամաքանակները տարբեր են: Յուրաքանչյուր գործառույթային ցուցանիշի կարգին համապատասխանող յուրաքանչյուր առաջադրանքի համար Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցները հատկացնում են որոշակի ժամանակահատված (փոքրից մեծ): Յուրաքանչյուր առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ շաբաթական ժամաքանակը պարզելուց հետո ընդհանուր ժամաքանակը կարող եք համեմատել HTG ուղեցույցների հետ՝ համոզվելու համար, որ համապատասխանում եք սովորաբար ձեր գործառույթային ցուցանիշի կարգին համար թույլատրելի ժամաքանակի՝ չնայած բացառություններին:

Մեր հրապարակումը կազմվել է ուղեցույցի նոր ձևաչափին (ժամ:րոպե) համապատասխան, որում ժամերը գրվում են հետևյալ կերպ. 1.30 ժամ 1 ½ ժամի փոխարեն կամ 1 ժամ 30 րոպե: Եթե ինչ-որ բան անելու համար ձեզ անհրաժեշտ է 1 ժամ 1 րոպե, ապա պետք է գրեք 1.01: Ահա այդ ձևաչափի մի քանի օրինակ.

.01 = 1 րոպե

.02 = 2 րոպե

.03 = 3 րոպե

.04 = 4 րոպե

.10 = 10 րոպե

.20 = 20 րոպե

.30 = 30 րոպե

.40 = 40 րոպե

.50 = 50 րոպե

.60 = 1 ժամ (60 րոպե)

1.05 = 1 ժամ 5 րոպե

2.25 = 2 ժամ 25 րոպե

Սա նոր ձևաչափ է, և ձեր Ծանուցման մեջ օգտագործվում է այս ձևաչափը: Այս հրապարակման նախորդ տարբերակներում օգտագործվել է MPP-ում օգտագործված ձևաչափը, որը իրենից ներկայացնում է ժամի տասնորդական ձևաչափը: Այդ ձևաչափն ուներ այս տեսքը. 1.50 ժամ, որը հավասար էր $1 \frac{1}{2}$ ժամի կամ 1 ժամ 30 րոպեի: Ահա, թե ինչպես են հաշվարկվում մեկ ժամի տասնորդականները.

.05 = 03 րոպե

.08 = 05 րոպե

.10 = 06 րոպե

.15 = 09 րոպե

.17 = 10 րոպե

.20 = 12 րոպե

.25 = 15 րոպե

.30 = 18 րոպե

.33 = 20 րոպե

.35 = 21 րոպե

.40 = 24 րոպե

.42 = 25 րոպե

.45 = 27 րոպե

.50 = 30 րոպե

.55 = 33 րոպե

.58 = 35 րոպե

.60 = 36 րոպե

.65 = 39 րոպե

.70 = 42 թույն

.75 = 45 թույն

.80 = 48 թույն

.83 = 50 թույն

.90 = 54 թույն

.92 = 55 թույն

.95 = 57 թույն

1.00 = 60 թույն

2.00 = 120 թույն

3.00 = 180 թույն

4.00 = 240 թույն

5.00 = 300 թույն

Այս մասին կարող եք մանրամասն տեղեկանալ Բոլոր վարչաշրջաններին ուղղված տեղեկատվական ծանուցման թիվ I-82-17 համարում (առ 5-ը դեկտեմբերի, 2017թ.), որը հասանելի է առցանց: [վարչաշրջանների ծանուցման կայք]

(ՆՇՈԻՄ. Հետևյալ բաժինը հասանելի է ոչ ամբողջությամբ: Խնդրում ենք կապվել մեզ հետ 1-800-776-5746 հեռախոսահամարով, եթե այդ աշխատաթերթերը ձեզ անհրաժեշտ են այլ ձևաչափով):

3.

IHSS-ի համապատասխանության ինքնուրույն գնահատման աշխատաթերթ

Տնային օժանդակող ծառայությունների համապատասխանության ինքնուրույն գնահատման աշխատաթերթ

Տնային ծառայություններ. Միայն մեծահասակների համար: Երեխաներն իրավունակ չեն տնային ծառայությունների ժամեր ստանալու համար:

Տնային ծառայությունները սովորաբար սահմանափակվում են ամսական 6 ժամով մեկ տան համար և բաժանվում են տվյալ տանն ապրող մարդկանց թվի վրա: Եթե ձեզ տնային ծառայությունների համար ամսական անհրաժեշտ են 6-ից ավելի ժամեր շահառուի հաշմանդամության պատճառով (օր.՝ լոգարանի ավելի հաճախակի մաքրում անմիզապահության պատճառով, փոշու հաճախակի մաքրում ասթմայի պատճառով և այլն), ապա ներքևի աղյուսակներում նշեք անհրաժեշտ ժամաքանակը:

IHSS ՏՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՄԱԿԸ ՊԵՏՔ Է ՏՊԵԼ ԵՎ ԼՐԱՑՆԵԼ ԴԱՏԱՐԿ ՎԱՆԴԱԿՆԵՐՈՒՄ

ՏՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Երկ.	Երք.	Չրք.	Հնգ.	Ուր.	Շբթ.	Կիր.	ԸՆԴԱՄԵՆԸ
a. Մաքրում ավելով և փոշեկուլով								
b. Խոհանոցի աշխատասեղանի լվացում								

ՏՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Երկ.	Երք.	Չրք.	Հնգ.	Ուր.	Շբթ.	Կիր.	ԸՆԴԱՄԵՆԸ
c. Ջեռոցի և սալօջախի մաքրում								
d. Սառնարանի մաքրում և ապաստառեցում								
e. Մթերքի և պաշարեղենի պահպանում								
f. Աղբի թափում								
g. Փոշու մաքրում և հավաքում								
h. Բակի վառելիքի տարայից ջեռուցման կամ ճաշի եփման համար վառելիքի բերում, այլ								
i. Անկողնու սպիտակեղենի փոխում								

ՏՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Երկ.	Երք.	Չրք.	Հնգ.	Ուր.	Շբթ.	Կիր.	ԸՆԴԱՄԵՆԸ
յ. Այլ ծառայություններ								
ԸՆԴԱՄԵՆԸ ՏՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ								

Հարակից ծառայություններն են՝ ճաշի պատրաստումը, ճաշից հետո մաքրումը, ամենօրյա լվացքը, սննդամթերքի գնումը և այլ տեսակի գնումներ/գործեր (երկուշաբթիից կիրակի):

IHSS ՀԱՐԱԿԻՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՄԱԿԸ ՊԵՏՔ Է ՏՊԵԼ ԵՎ ԼՐԱՑՆԵԼ ԴԱՏԱՐԿ ՎԱՆԴԱԿՆԵՐՈՒՄ

ՀԱՐԱԿԻՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Երկ.			Երք.			Չրք.			Հնգ.			Ուր.			Շբթ.			Կիր.			ԸՆԴԱՄԵՆԸ
	Ն	Լ	Ը	Ն	Լ	Ը	Ն	Լ	Ը	Ն	Լ	Ը	Ն	Լ	Ը	Ն	Լ	Ը	Ն	Լ	Ը	
Նախաճաշ=Ն, Լանչ=L, Ընթրիք=Ը	Ն	Լ	Ը	Ն	Լ	Ը	Ն	Լ	Ը	Ն	Լ	Ը	Ն	Լ	Ը	Ն	Լ	Ը	Ն	Լ	Ը	
a. Ճաշի պատրաստում, ճաշի մատուցում, սննդի կտրտում*																						
b. Մաքրում ճաշից հետո և ճաշացանկի կազմում**																						

ՀԱՐԱԿԻՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Երկ.	Երք.	Չրք.	Հնգ.	Ուր.	Շբթ.	Կիր.	ԸՆԴԱՄԵՆԸ
<p>Կ. Լվացք, հագուստի նորոգում, արդուկում, տեսակավորում, ծալում և դասավորում</p> <p>(սովորաբար տրվում է շաբաթական 60 րոպե տանը, շաբաթական 90 րոպե տանից դուրս)***</p>								
<p>Ժ. Այլ գնումներ և այլ գործեր</p> <p>(սովորաբար շաբաթական 30 րոպե առավելագույնը)***</p>								
ԸՆԴԱՄԵՆԸ ԱՌՆՉՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ								

Հարակից ծառայություններ. լայնածավալ մաքրում, ոչ բժշկական անձնական ծառայություններ

IHSS ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՄԱԿԸ ՊԵՏՔ Է ՏՊԵԼ ԵՎ ԼՐԱՑՆԵԼ ԴԱՏԱՐԿ ՎԱՆԴԱԿՆԵՐՈՒՄ

ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Երկ.	Երբ.	Չրբ.	Չնգ.	Ուր.	Շբթ.	Կիր.	ԸՆԴԱՄԵՆԸ
<u>ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՄԱՔՐՈՒՄ</u>								
<u>ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>								
a. Շնչառություն*								
b. Աղիների/միզապարկի խնամք (ներառյալ աթոռ- զուգարանին նստել/բարձրանալը)*								
c. Ուտել և խմել*								
d. Հիգիենիկ վաճուճներ անկողնում*								
e. Հագնվել*								
f. Դաշտանային խնամք*								

ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Երկ.	Երք.	Չրք.	Հնգ.	Ուր.	Շբթ.	Կիր.	ԸՆԴԱՄԵՆԸ
g. Դաշտանային խնամք*								
h. Վեր կենալ անկողնուց և պառկել*								
i. Հարդարում, լոգանք, մազերի խնամք, ատամների ու եղունգների խնամք*								
j. Մաշկի տրորում արյան շրջանառությանը օգնելու նպատակով, շրջում անկողնում, դիրքափոխում անվասայլակում, օգնություն ավտոմեքենա նստելուց և իջնելուց*								
k. Պրոթեզների խնամք և օգնություն դրանցից օգտվելիս*								

ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Երկ.	Երք.	Չրք.	Հնգ.	Ուր.	Շբթ.	Կիր.	ԸՆԴԱՄԵՆԸ
ԸՆԴԱՄԵՆԸ ԱՆՁՆԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ								

**ՈԽՏ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՄԱԿԸ ՊԵՏՔ Է ՏՊԵԼ ԵՎ ԼՐԱՑՆԵԼ ԴԱՏԱՐԿ
ՎԱՆԴԱԿՆԵՐՈՒՄ**

ՓՈՒԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Երկ.	Երք.	Չրք.	Հնգ.	Ուր.	Շբթ.	Կիր.	ԸՆԴԱՄԵՆԸ
Փոխադրում բժշկական նպատակով								
a. Բժշկական այցերի կատարում***								
b. Այլընտրանքային ռեսուրսների դիմել								
ԲԱԿԻ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ								
ՊԱՇՏՊԱՆԻՉ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ								
<u>ՀԱՐԲՇԿԱԿԱՆ</u> <u>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u> (օր. կաթնորսի տեղադրում, ներարկումներ, շարժական վարժությունների կատարում և այլն, մասնավորեցնել)								

<p>ԸՆԴԱՄԵՆԸ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p>(ամեն ինչ բացի տնային ծառայություններից)</p>								
<p>Բազմապատկելի 4.33-ով ամսական ընդհանուր ժամաքանակն ստանալու համար</p>								
<p>Գումարած տնային ծառայություններ</p> <p>(ամսական առավելագույնը ժամ, եթե ավել քանակով պահանջվող ժամերը չեն կարող ցույց տրվել 1-ին էջում)</p>								
<p>ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>								

* Եթե աստղանիշով նշված ժամերի քանակը հավասար է շաբաթական 20 կամ ավել ժամի, շահառուն համապատասխանում է «լուրջ խնդիր ունեցող»:

** Ճաշից հետո մաքրման ժամաքանակը ներառվում է լուրջ առողջական խնդիրը որոշելու մեջ, եթե ճաշ պատրաստելու և ուտելու համար անհրաժեշտ է IHSS-ի օգնությունը:

*** IHSS-ն կվճարի բժշկական այցելությունների նպատակներով փոխադրումների համար անհրաժեշտ ժամանակի, ինչպես նաև սպասելաժամանակի համար: Բժշկական այցելությունների ընթացքում ծախսած սպասելաժամանակի դիմաց վճարվելու համար խնամատուն պետք է ցույց տա, որ բժշկի այցելության ժամանակ ինքը չի կարող հեռանալ, քանի որ չի կարող կանխատեսել, թե որքան կտևի շահառուի այցելությունը: Բժշկական այցելությունների նպատակով փոխադրումների և տեղում խնամատուի սպասելաժամանակի մասին մանրամասն տե՛ս մեր «IHSS-ի խնամատուի սպասելաժամանակը և երթևեկելու ժամանակը» հրապարակումը, որը հասանելի է առցանց: [DRC Հրապ.# 5607.01](#).

4.

Տնային օժանդակող ծառայությունների համապատասխանության գնահատման չափորոշիչների աշխատաթերթ

IHSS շահառուի անունը, ազգանունը՝ Սեղմեք կամ հպեք այստեղ տեքստը մուտքագրելու համար:

IHSS-ի գնահատումը

IHSS-ի ժամաքանակը, որը դուք ստանալու եք, կախված է այն բանից, թե քանի ժամի կարիք դուք ունեք: Վարչաշրջանի սոցիալական աշխատողը հաշվարկում է ձեզ անհրաժեշտ ժամերի քանակը «գործառույթային գնահատում» իրականացնելուց հետո: Սա ամենօրյա կենցաղային գործեր անելու մեջ ձեր սահմանափակումների գնահատումն է:

Գործառույթային գնահատում կատարելուց և ձեզ անհրաժեշտ ժամերի քանակը հաշվարկելուց հետո սոցիալական աշխատողը համեմատում է ձեր գործառույթային գնահատումը ձեզ անհրաժեշտ ժամերի հետ՝ համոզվելու, որ դուք ստանում ձեզ իրականում անհրաժեշտ ժամերը ճիշտ քանակությամբ:

Այս ձևը կօգնի ձեզ սահմանել Գործառույթային ցուցանիշի (անգլ.՝ Functional Index, FI) կարգերը: FI կարգերը նախատեսված են չափելու, թե որքան լուրջ են ձեր գործառույթային սահմանափակումները: Այս FI կարգերն օգտագործվում են վարչաշրջանի սոցիալական աշխատողների կողմից՝ օգնելու սահմանել ամենաշատ IHSS ծառայությունների համար ձեզ անհրաժեշտ ժամերի քանակը:

Այս աշխատաթերթը կօգնի նաև հասկանալ IHSS-ի Գործերի համար անհրաժեշտ ժամաքանակի հաշվարկման ուղեցույցները (Hourly Task Guidelines, HTGs): Սրանք այն ուղեցույցներն են, որոնք վարչաշրջանի սոցիալական աշխատողներն օգտագործում են IHSS-ի համար ձեզ անհրաժեշտ ժամերի քանակը որոշելիս: Այս աշխատաթերթը կօգնի նաև անհրաժեշտության դեպքում համաչափորեն բաշխել ժամերը:

ՆՇՈԻՄ. CDSS-ն 2017թ. դեկտեմբերին փոխել է HTG ժամերի ձևաչափը՝ այն CDSS-ի գործերի կառավարման համակարգի ձևաչափին համապատասխանեցնելու համար: Փոփոխության մասին մենկաբանությունը ներկայացված է Բոլոր վարչաշրջաններին ուղղված ծանուցման (ACIN) թիվ I-82-17 նամակում (5-ը դեկտեմբերի, 2017թ.), որը հասանելի է այստեղ: Դա նշանակում է, որ նոր, փոփոխված ձևաչափը թեթևակիորեն տարբերվում է մեր նշած MPP հղումներից: MPP-ն HTG ժամերը ցույց է տալիս ժամի տասնորդական ձևաչափով և գրվում է այնպես, ինչպես այս օրինակում է. 1.50 ժամ 1 ½ ժամի փոխարեն կամ 1 ժամ 30 րոպե: Ժամի տասնորդական ձևաչափը փոխարկելու համար տե՛ս Հավելված Ա-ն:

Սակայն ձեզ ուղարկվող ծանուցման մեջ օգտագործվում է այս նոր ձևաչափը, որում HTG ժամերը տրված են ժամ:րոպե ձևաչափով: Նոր ձևաչափն ունի հետևյալ տեսքը. 1.30 ժամ 1 ½ ժամի փոխարեն կամ 1 ժամ 30 րոպե: Ահա ևս մեկ օրինակ. 1:17 նշանակում է 1 ժամ 17 րոպե:

Ստորև ներկայացված է սույն աշխատաթերթից օգտվելու ձևը.

1. Աշխատաթերթ թիվ 1-ի տեղեկատվությունը (Դիմում հիվանդի գործառնությանին սահմանափակումները փաստող տեղեկատվություն ստանալու համար) տեղափոխեք այս աշխատաթերթ (Աշխատաթերթ թիվ 4, IHSS-ի գնահատման չափորոշիչների աշխատաթերթ): Ձեր բժիշկը յուրաքանչյուր առաջադրանքի համար ձեզ տվել է դասակարգում, այժմ դուք պետք է լրացնեք այս աշխատաթերթը այս նույն դասակարգմանը համապատասխան:
2. Աշխատաթերթ թիվ 3-ի տեղեկատվությունը (IHSS-ի համապատասխանության ինքնուրույն գնահատման աշխատաթերթ) տեղափոխեք այս աշխատաթերթ (Աշխատաթերթ թիվ 4, IHSS-ի գնահատման չափորոշիչների աշխատաթերթ): Աշխատաթերթ թիվ 3-ը (IHSS-ի համապատասխանության ինքնուրույն գնահատման աշխատաթերթ) օգնել է ձեզ հաշվարկել յուրաքանչյուր առաջադրանքի համար անհրաժեշտ ընդհանուր ժամերը: Սա անհրաժեշտ ընդհանուր իրական ժամերի քանակն է: Տես այն ծառայությունների (տնային գործերի) կարիքը հաշվարկվում է ամսական ժամերով: Այլ ծառայությունների կարիքը հաշվարկվում է շաբաթական ժամերով:

3. Համեմատեք անհրաժեշտ ընդհանուր ժամերը Գործերի համար անհրաժեշտ ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ: Եթե անհրաժեշտ ընդհանուր ժամերը դուրս են ուղեցույցում սահմանված ժամերի քանակից, բացատրեք, թե ինչու է ձեզ բացառություն անհրաժեշտ:
4. Ըստ անհրաժեշտության, համաչափորեն բաշխեք ժամերը, եթե ձեր տանն ապրում են այլ մարդիկ, ովքեր չեն ստանում IHSS:

Գործառնության ցուցանիշի կարգ. MPP բաժին 30-756.1

Վարչաշրջանի սոցիալական աշխատողը պետք է դասակարգի ձեր գործառնության գործողությունները հետևյալ ոլորտներից յուրաքանչյուրի համար: Վերջին երեքի՝ հիշողության, կողմնորոշվելու և դատելու կարողությունների միջոցով որոշվում է միայն Պաշտպանիչ վերահսկողության կարիքը:

1. Տևային ծառայություններ (տան գործեր)
2. Լվացք
3. Գնումներ և այլ գործեր
4. Ճաշի պատրաստում/ճաշից հետո մաքրություն
5. Զայլելու կարողություն (նախկինում շարժունակություն ներսում)
6. Լոգանք, բերանի խոռոչի հիգիենիկ խնամք և արտաքին խնամք/Ամենօրյա լվացումներ անկողնում (լոգանք և արտաքին խնամք)
7. Հագնվելու կարողություն/Պրոթեզային սարքեր (հագնելը)
8. Աղիների, միզապարկի և դաշտանային խնամք
9. Տեղաշարժում (դիրքի փոփոխում)
10. Ուտելու կարողություն
11. Շնչառություն
12. Հիշողություն
13. Կողմնորոշում և

14. Դատելու կարողություն:

Ստորև ներկայացված են ընդհանուր չափանիշները, որոնք օգտագործում եք յուրաքանչյուր գործառնության կարգը որոշելու համար: Այս աշխատաթերթը նաև թվարկում է յուրաքանչյուր գործառնություն հատուկ չափանիշները: Ընդհանուր ստանդարտները պարտադիր են, քանի որ դրանք համարվում են նահանգային կանոնակարգեր: Հատուկ ստանդարտները ծառայում են միայն որպես ուղեցույց, քանի որ դրանք ներառված չեն կանոնակարգերում:

Յուրաքանչյուր գործառնության կարգը պետք է որոշվի ֆիզիկական, կոգնիտիվ և հուզական տկարության հիման վրա: Կարգը չի սահմանվում միայն ֆիզիկական սահմանափակումների հիման վրա:

Գործառնության սահմանափակումների դասակարգման ընդհանուր չափանիշները կարելի է գտնել նահանգային IHSS կանոնակարգերում՝ MPP բաժին. 30-756.1:

Կարգ 1-ին. անկախ է. կարող է կատարել գործառնությունը առանց մարդու օգնության: Չնայած շահառուն հնարավոր է դժվարություն ունենա գործառնություն կատարելիս, սակայն գործառնության կատարումը թե՛ սարքի կամ շարժունակությանն օժանդակող հարմարանքի միջոցով, թե՛ առանց դրանց որևէ եական վտանգ չի ներկայացնում շահառուի անվտանգության համար: Ցանկացած գործառնության համար «1-ին» կարգն ունեցող շահառուին չպետք է թույլատրվի զուգորդվող ծառայության տրամադրում:

Կարգ 2-րդ. ի վիճակի է կատարել գործառնությունը, սակայն ունի խոսքային օժանդակման կարիք, օրինակ՝ հիշեցում, ուղղորդում կամ աջակցություն:

Կարգ 3-րդ. գործառնությունը կարող է որոշակի չափով կատարել մարդու օգնությամբ՝ ներառյալ ինսամատուի կողմից ցուցաբերվող ուղղակի ֆիզիկական աջակցությունը և օժանդակման այլ կարիքները:

Կարգ 4-րդ. կարող է կատարել գործառնությունը, սակայն հիմնականում միայն մարդու կողմից ցուցաբերվող օգնությամբ:

Կարգ 5-րդ. չի կարողանում կատարել գործառույթը ո՛չ մարդու օգնությամբ, ո՛չ էլ առանց օգնության:

Նշում. **Մտավոր ֆունկցիոնալություն (ուղեղի աշխատանք):** Մտավոր ֆունկցիոնալությունը պետք է հաշվի առնվի յուրաքանչյուր գործառույթի կարգը որոշելու դեպքում: MPP բաժին 30-756.37-ը սահմանում է մտավոր ֆունկցիոնալության գնահատումը հետևյալ կերպ.

MPP բաժին. 30-756.371. «Այն, թե որքանով է շահառուի կոգնիտիվ և հուզական տկարությունը (եթե կա) ազդում նրա [վերոնշյալ] 11 ֆիզիկական գործառույթների վրա, դասակարգվում է այդ գործառույթներից յուրաքանչյուրի համար առանձին: Մարդու կողմից միջամտության մակարդակն ու տեսակը պետք է արտացոլվի յուրաքանչյուր գործառույթի կարգում»

MPP բաժին. 30-756.372. «Շահառուի մտավոր գործառույթը հիշողության, կողմնորոշվելու և դատելու գործառույթների դեպքում պետք է գնահատվի եռաստիճան սանդղակով (Կարգեր 1, 2, և 5): Սանդղակն օգտագործվում է պաշտպանիչ վերահսկողության կարիքը որոշելու համար»:

Նշում. **Հարբժշկական ծառայություններ:** Եթե դուք ամբողջ սնունդն ստանում եք զոնդային սնուցման եղանակով, դուք պետք է ստանաք այս ծառայությունը ավելի շուտ որպես հարբժշկական ծառայություն, քան ուտելու, ճաշ պատրաստելու կամ ճաշից հետո մաքրության սպասարկում: Այդ դեպքում, թե՛ ուտելը, թե՛ ճաշի պատրաստումը/ճաշից հետո մաքրումը պետք է դասակարգվեն որպես 1: Տե՛ս MPP բաժին 30-756.4.

Եթե ձեզ անհրաժեշտ է շնչափողահատման և ծծելով քաշելու հետ կապված խնամք, դուք պետք է ստանաք այս ծառայությունները ավելի շուտ որպես հարբժշկական ծառայություն, քան որպես շնչառության հետ կապված ծառայություն: Եթե սրանք շնչառության հետ կապված միակ ծառայություններն են, որոնց կարիքը դուք ունեք, շնչառությունը պետք է դասակարգվի որպես 1: Տե՛ս MPP բաժին 30-756.4.

Նշում. **Փոփոխական ֆունկցիոնալություն:** Եթե ամսվա ընթացքում ձեր գործառույթային կարողությունները փոխվում են, ապա գործառույթային դասակարգումը պետք է արտացոլի այն ֆունկցիոնալությունը, որը կրկնվում է վատ զգալու օրերին: Դա կապված չէ միայն «ամենավատ» օրվա ֆունկցիոնալության հետ (օրինակ, եթե արթրիտով հիվանդ եք, կարող եք ունենալ սաստիկ ցավոտ կամ մեղ

ցավոտ օրեր: Սոցիալական աշխատողը պետք է որոշի ձեր գործառնության ջրհանիչի կարգերը սաստիկ ցավոտ օրերի քանակությամբ): MPP բաժին 30-757.1(a)(1).

Նշում. Ժամաքանակի որոշում առաջադրանքի կատարման համար Ձեր գործառնության ջրհանիչի դասակարգումների հիման վրա սահմանված առաջադրանքներ կատարելու ձեր ունակությունը հանդիսանում է առաջադրանքի կատարման ժամաքանակը (IHSS-ի կարիքի ժամեր) որոշելու համար նպաստող, բայց ոչ միակ, գործոնը: Այլ գործոններ են ձեր բնակվելու միջավայրը և ձեր գործառնության կարողությունների փոփոխումները MPP բաժին 30-757.1(a)(1).

Նշում. Առաջադրանքների ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի (HTG) բացառություններ: Ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի բացառությունները պետք է կատարվեն անհրաժեշտության դեպքում, որպեսզի հնարավոր լինի սահմանել և պահպանել անկախ ապրելակերպի կազմակերպումը և/կամ տանը ապահով մնալը և պետք է համարվի թույլատրման գործընթացի սովորական մաս MPP բաժին 30-757.1(a)(3).

Վարչաշրջանի սոցիալական աշխատողի գնահատում

Ստորև նշված են վարչաշրջանի սոցիալական աշխատողի կողմից օգտագործվող գնահատման չափորոշիչները: Հատուկ գործառնության սահմանափակման գնահատման չափորոշիչները վերցված են Գնահատման չափորոշիչների բացատրությունից, Հավելված B, All-County Letter (ACL) 06-34E2, 4-ը մայիսի 2007թ.: Ժամաքանակի հաշվարկման ուղեցույցները վերցված են IHSS-ի նահանգային կանոնակարգերից MPP բաժին. 30-757.

Տնային ծառայություններ (տան գործեր). MPP բաժին 30-757.11

Տան հավաքում, փոշեկուլով մաքրում և հատակների լվացում/մաստիկայապատում, խոհանոցային սեղանների ու լվացարանների լվացում, լոգասենյակի լվացում, սննդի և այլ պարագաների պահուստավորում, աղբի թափում, փոշու մաքրում, ջեռոցի և սալօջախի մաքրում, սառնարանի մաքրում և ապաստառեցում, բակի վառելիքի բաքից վառելիքի բերում տուն ջեռուցման կամ ճաշ պատրաստելու նպատակով, անկողնու սպիտակեղենի փոխում, լամպերի փոխում և անվասայլակի մաքրում և անվասայլակի մարտկոցների փոխում/վերալիցքավորում:

- **Կարգ 1-ին** - Անկախ. Կարող է կատարել բոլոր տնային գործերն առանց առողջությանը կամ անվտանգությանը վտանգ սպառնալու: Շահառուն ի վիճակի է կատարել բոլոր գործերը, սակայն օրվա մեջ կարող է անել ընդամենը մի քանի գործ, որպեսզի շատ չլարվի:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք տունը մաքուր է և հավաքված: Դիտարկել, թե արդյոք շահառուի տեղաշարժման կարողությունը տկարացած չէ:
- Օրինակ. Շահառուն, առանց տկարության նշանների, հեշտությամբ տեղաշարժվում է հավաքված սենյակում, կռանում է իրեր վերցնելու համար և երկարում է ձեռքը դարակներից իրեր վերցնելու համար:
- Հարց, որը կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք ի վիճակի՞ եք ինքնուրույն կատարել բոլոր տնային գործերը, այդ թվում՝ թափել աղբը:
- **Կարգ 2-րդ** - Կարող է կատարել գործեր, սակայն ունի մեկ այլ անձի ուղղություն ցույց տալու կամ աջակցության կարիքը: Շահառուն ի վիճակի է կատարել գործերը, եթե որևէ մեկը նրա համար կազմում է գործերի ցուցակ կամ հիշեցնում է նրան:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուն ունի շօնփվածություն կամ մոռացկոտություն և չունի արտաքինից նկատելի որևէ ֆիզիկական խնդիր, որն այնքան ծանր աստիճանի լինի, որ սահմանափակի նրա տնային գործեր անելու կարողությունը, արդյոք դուք տեսնում եք անհամապատասխանություն ձեր դիտարկածի հետ, օրինակ կեղտոտ ամաններ լվացարանում:
- Օրինակ. Երիտասարդ տղամարդ է, ով ակնհայտորեն առողջ է ֆիզիկապես, սակայն երևում է ակնհայտ շփոթված և մոռացկոտ, նրան հիշեցնում են, որ ժամանակն է ավել կամ փոշեկուլով մաքրել:
- Հարց, որը կարող է տալ սոցիալական աշխատողը. Ինչպե՞ս եք մաքուր պահում ձեր տունը: Ձեզ որևէ մեկն օգնե՞լ է մինչ օրս:

- **Կարգ 3-րդ** - Որոշ գործերի համար ունի մեկ այլ անձի կողմից ֆիզիկապես օգնություն ստանալու կարիք, օր.՝ դիմացկունությունը սահմանափակ է կամ ունի կռանալու, թեքվելու, ինչ-որ բանի հասնելու սահմանափակումներ և այլն:
 - Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուն ունի տեղաշարժման հետ կապված խնդիրներ, ինչպես նկարագրված է վերևում, արդյոք ունի սահմանափակ դիմացկունություն, արդյոք արագ է հոգնում կամ արդյոք ունի տեսողության զգալի սահմանափակում: Դիտարկել, թե արդյո՞ք տունն ընդհանուր առմամբ հավաք է և ունի միայն լավ մաքրության կարիք, արդյո՞ք ակնհայտ երևում է, որ շահառուն փորձել է մաքրել այն, բայց չի կարողացել:
 - Օրինակ. Փոքրահասակ նիհար կինը պատասխանում է բնակարանի դռան զանգին: Բնակարանում, գորգի վրա, կան աղբի թափված կտորներ, իսկ խոհանոցի հատվածի աղբամանը բավական լիքն է: Բնակարանի մնացած մասը հավաք է:
 - Հարց, որը կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք ինքնուրու՞յն եք կատարում տնային գործերը: Ինչպե՞ս եք մինչ օրս կազմակերպել ձեր տնային գործերի կատարումը:
- **Կարգ 4-րդ** - Չնայած կարող է կատարել մի քանի գործեր (օր.՝ կահույքի փոշու մաքրում կամ սեղանների սրբում), սակայն շատ գործերի համար անհրաժեշտ է մեկ այլ անձի օգնությունը:
 - Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուն ունի սահմանափակ ուժեղություն, և արդյոք նրա շարժումները տկարացած են: Դիտարկել, թե արդյոք տունն ունի մեծ մաքրության կարիք:
 - Օրինակ. Ձեռնափայտով քայլող շահառուն թափթփված սենյակում շնչում է դժվարությամբ: Լոգարանն ու զուգարանը ունեն մարքրության կարիք: Շահառուի գործողությունները սահմանափակ են հևոցի ու գլխապտուկյտի պատճառով:
 - Հարց, որը կարող է տալ սոցիալական աշխատողը. Ինչպիսի՞ տնային գործեր կարող եք կատարել: Ձեր բժիշկը սահմանափակե՞լ է ձեր գործողությունները:

□ **Կարգ 5-րդ** - Բոլոր տնային գործերի համար ամբողջովին կախված է ուրիշներից:

- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք տունն ակնհայտ փոշոտ/կեղտոտ է, արդյոք տանը կա բուրացող աղբ, արդյոք զուգարանն ունի մաքրման ու լվացման կարիք, արդյոք որոշ ժամանակ ակնհայտորեն չեն արվել տնային գործեր: Դիտարկել, թե արդյոք շահառուն ունի ակնհայտ սահմանափակ շարժունակություն կամ մտավոր սահմանափակումներ:
- Օրինակներ. Անկողնուն գամված շահառուն կարող է պատասխանել հարցերին, նրա ոտքերն ու ձեռքերը չեն շարժվում: Տարեց նիհար տղամարդը վերականգնվում է սրտի վիրահատությունից հետո, և բժիշկը նրան արգելել է կատարել տնային գործեր:
- Հարց, որը կարող է տալ սոցիալական աշխատողը. Կա՞ն տնային գործեր, որոնք դուք կարող եք կատարելու: Ի՞նչն է սահմանափակում ձեր գործողությունները: Ո՞վ է օգնել ձեզ մինչ օրս:

Տնային ծառայություններ (տան գործեր). MPP բաժին 30-757.11

<p><u>Գործերի համար անհրաժեշտ ընդհանուր ժամաքանակ</u></p> <p>(Նախքան Գործերի համար անհրաժեշտ ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ համեմատելը)</p> <p>(ամսական ժամեր)</p>	<p><u>Գործառույթային գուցանիշի կարգ.</u></p>	<p><u>Չամեմատում Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ</u></p> <p>(ամսական ժամեր տնային ծառայությունների համար)</p>
<p>Ամսական ժամեր. _____</p>	<p>Կարգ 2-րդ</p> <p>Կարգ 3-րդ</p> <p>Կարգ 4-րդ</p> <p>Կարգ 5-րդ</p>	<p>6:00 ժամ ամսական յուրաքանչյուր տան համար</p>

Արդյո՞ք անհրաժեշտ են Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի բացառություններ:

Այո Ոչ

Նշել բացառությունների պատճառները. _____

Լվացք. MPP բաժին 30-757.134

Լվացքի մեքենայից օգտվելու, լվացքը տեսակավորելու, օճառի տարաներից օգտվելու, լվացքի մեքենայի ներսից օգտվելու, թաց լվացքը մշակելու, մեքենայի կարգավորիչներից օգտվելու, լվացքը փռելու, լվացքը ծալելու և տեսակավորելու, կարկատելու և արդուկելու կարողություններ (սշում. 2-րդ և 3-րդ կարգերը կիրառելի չեն այս գործերի համար ֆունկցիոնալությունը որոշելու համար):

Կարգ 1-ին - Անկախ. Կարող է կատարել բոլոր գործերը:

- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուի տեղաշարժման ունակությունը տկարացած է, արդյոք նա ի վիճակի է քայլել, բռնել, կռանալ, բարձրացնել և ադեկվատ կերպով կանգնել, արդյոք նա կրում է մաքուր հագուստ:
- Օրինակ. Շահառուն ֆիզիկապես ակնհայտ առողջ է: Հարցազրույցի ժամանակ շահառուի տեղաշարժումները ցույց են տալիս, որ նա չունի ձեռքը երկարելու, կռանալու կամ բարձրացնելու ինդիքներ:
- Հարց, որը կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք ի վիճակի՞ եք լվանալ և չորացնել ձեր սեփական շորերը: Դուք ի վիճակի՞ եք ծալել և դասավորել դրանք:

Կարգ 4-րդ - Ունի օգնության կարիք շատ առաջադրանքների համար: Միգուցե կարողանա կատարել լվացքի հետ կապված որոշ գործեր (օր.՝ ձեռքով լվանալ անձնական սպիտակեղենը, ծալել և(կամ) դասավորել հագուստն ինքնուրույն կամ հսկողության տակ):

- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուն ունի տեղաշարժման կարողության որոշակի տկարություն, ճոճվում է, ցուցաբերում է մոռացկոտություն կամ ունի տեսողության լուրջ սահմանափակում, արդյոք շահառուի հագուստը կեղտոտ է կամ ունի կեղտաբծեր:
 - Օրինակ. Նիհար կին է և չի կարողանում թաց լվացքը, հատկապես սավաններն ու սրբիչները, տեղափոխել չորանոց: Նրա հետ նույն շենքում բնակվող հարևանն առաջարկում է իր օգնությունը լվացքը տեսակավորելու և ծալելու և այլ գործերում:
 - Զարգ, որը կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք ի վիճակի՞ եք բարձրացնել և տեղափոխել լվացքի խոնավ իրերը: Ինչպե՞ս եք մինչև այժմ արել այս լվացքը: Ո՞վ է ձեզ համար մինչ օրս արել լվացքը: Արդյո՞ք ձեր բժիշկն առաջարկել է, որ ձեր թւերով ու ձեռքերով անեք միայն պարզ գործեր:
- Կարգ 5-րդ** - Ոչ մի գործ չի կարողանում անել, ամբողջովին կախված է մեկ այլ անձի օգնությունից:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք կան տեղաշարժման խիստ սահմանափակումներ:
 - Օրինակ. Կվադրիպլեգիա հիվանդությամբ շահառուն նստած է անվասայլակում, ակնհայտորեն ի վիճակի չէ կատարել լվացքի հետ կապված գործողություններ:
 - Զարգ, որը կարող է տալ սոցիալական աշխատողը. Ո՞վ է այժմ անում ձեր լվացքը: Ի՞նչ է փոխվել ձեր պարագայում, որի պատճառով որոշել եք այժմ դիմել օգնության:

Լվացք. MPP բաժին 30-757.134

<p><u>Գործերի համար անհրաժեշտ ընդհանուր ժամաքանակ</u></p> <p>(նախքան Գործերի համար անհրաժեշտ ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ համեմատելը)</p>	<p><u>Գործառույթային ցուցանիշի կարգ.</u></p>	<p><u>Յամեմատում Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ</u></p> <p>(շաբաթական ժամեր)</p>
<p>Շաբաթական ժամեր. _____</p>	<p>Կարգ 4-րդ կամ Կարգ 5-րդ</p>	<p>շաբաթական 1:00 ժամ, եթե լվացքատունը շենքում է</p> <p>շաբաթական 1:30 ժամ, եթե լվացքատունը շենքից դուրս է:</p>

Արդյո՞ք անհրաժեշտ են Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի բացառություններ:

Այո Ոչ

Նշել բացառությունների պատճառները. _____

Գնումներ և այլ գործեր. MPP բաժին 30-757.135

Կազմել գնումների ցուցակ, թեքվել, վերցնել, բարձրացնել և քշել գնումների սայլակը կամ կրել զամբյուղը, գտնել անհրաժեշտ ապրանքները, տանել ապրանքները տուն և դասավորել, զանգել և գրի առնել նշանակումները և գնել հագուստ (նշում. 2-րդ և 4-րդ կարգերը կիրառելի չեն այս գործերի համար ֆունկցիոնալությունը որոշելու համար):

- Կարգ 1-ին** - Անկախ. Կարող է կատարել բոլոր գործերն առանց օգնության:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շարժունակությունը տկարացած է, և արդյոք շահառուն կողնորոշվում է:
- Օրինակ. Սոցիալական աշխատողը հարցեր է տալիս տարեց տղամարդուն, որի պատասխանները ցույց են տալիս, որ նա կարող է կատարել գնումներ իր համար և կարող է մթերքն ու այլ ապրանքները տեղավորել: Չնայած նրա շարժումները փորք-ինչ դանդաղ են, սակայն ակնհայտ է, որ նա կարող է կատարել այս գործը:
- Հարց, որը կարող է տալ սոցիալական աշխատողը. Ինչպե՞ս եք հոգում գնումներ կատարելու և ընդհանուր գործեր անելու ձեր կարիքները:
- Կարգ 3-րդ** – Ունի մեկ այլ անձի օգնության կարիքը որոշ գործեր անելու համար (օր.՝ օգնություն հիմնական գնումների ժամանակ, սակայն փոքր գնումների համար շահառուն կարող է գնալ մոտակա խանութ, կամ ունի ուղղություն ցույց տալու ուղղորդման կարիք):

- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք շահառուի շարժունակությունը ինչ-որ չափով տկարացած է, արդյո՞ք շահառուն ունի վատ դիմացկունություն կամ չի կարողանում է բարձրացնել ծանր իրեր, արդյո՞ք նա երևում է թեթևակի շփոթված կամ ունի տեսողության լուրջ խնդիր, արդյո՞ք նրա սառնարանում կամ պահարանում եղած մտունդը բավարար չէ:
- Օրինակ. Շահառուն ամեն օր գնում է անկյունի շուկան՝ որոշ փոքր ապրանքներ գնելու համար: Նրա գնումների ցուցակը կազմում է մեկ ուրիշը:
- Հարց, որը կարող է տալ սոցիալական աշխատողը. Արդյո՞ք դուք ունեք դժվարություն գնումներ կատարելիս: Որո՞նք են ամենածանր իրերը, որ կարող եք բարձրացնել: Դուք սովորաբար գնում եք բոլոր այն ապրանքները, որ պլանավորել եք գնել: Ձեզ համար դժվար է հիշել, թե ինչ էիք ցանկանում գնել կամ որոշել, թե ինչ եք ուզում գնել (շահառուի համար հարազատ որևէ մեկին հարցրեք, թե արդյո՞ք շահառուն դժվարությամբ է որոշում ինչ գնել, կամ արդյո՞ք շահառուի ուղեղի աշխատանքը տկարացած է թվում):

Կարգ 5-րդ – Ի վիճակի չէ ինքնուրույն գործեր կատարել:

- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք շարժունակությունը կամ մտավոր կարողություններն զգալիորեն սահմանափակ են:
- Օրինակ. Հարևաններն օգնում են, երբ կարողանում են: Պատանին գալիս է հարևանի տուն, շահառուից ստանում է գումար և ցուցակ՝ մի քանի մթերքներ գնելու համար:
- Հարց, որը կարող է տալ սոցիալական աշխատողը. Որևէ մեկը ձեզ համար գնումներ կատարում է: Ինչպե՞ս եք ձեռք բերում ձեր դեղերը:

Գնումներ և այլ գործեր. MPP բաժին 30-757.135

<p><u>Գործերի համար անհրաժեշտ ընդհանուր ժամաքանակ</u></p> <p>(Նախքան Գործերի համար անհրաժեշտ ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ համեմատելը)</p>	<p><u>Գործառուծային ցուցանիշի կարգ.</u></p>	<p><u>Համեմատում Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ</u></p> <p>(շաբաթական ժամեր)</p>
<p>Շաբաթական ժամեր. _____</p>	<p>Կարգ 3-րդ կամ Կարգ 5-րդ</p>	<p>շաբաթական 1:00 ժամ մթերքի գնումների համար:</p> <p>շաբաթական 0:30 ժամ այլ գնումների ու գործերի համար:</p> <p>Շահառուին ինամակալ ունենալու ժամեր չեն տրամադրվել:</p>

Արդյո՞ք անհրաժեշտ են Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի բացառություններ:

Այո Ոչ

Նշել բացառությունների պատճառները. _____

Ճաշի պատրաստում/Մաքրություն ճաշից հետո. MPP բաժիններ 30-757.131 և 30-757.132

Ճաշի պատրաստումը ներառում է այնպիսի գործեր, ինչպիսիք են՝ կազմել ճաշացանկ, սառնարանից կամ սկուղից հանել մթերքներ, լվանալ/չորացնել ձեռքերը ճաշի պատրաստումից առաջ և հետո, լվանալ, մաքրել և կտրտել բանջարեղենը, բացել փաթեթավորումները, բանկաներն ու տոպրակները, չափել և խառնել բաղադրիչները, բարձրացնել թավաներն ու կաթսաները, կտրտել միսը, տաքացնել սնունդը, եփել և անվտանգ կերպով օգտվել սալօջախից, պատրաստել սեղանը, մատուցել ճաշը, պատրաստել խյուս և սնունդը կտրտել կծելու համար հարմար չափսերով կտորների:

Մաքրություն ճաշից հետո. ներառում է սպասքեղենի տեղադրումը սպասք լվացող մեքենայում և հանումը, ավսեները, կաթսաները, թավաները, դանակ-պատառաքաղները և խոհարարական պարագաները լվանալն ու ջրցայելը և տեղավորելը, մնացած սննդի/ըմպելիքների պահուստավորելը/տեղավորելը, սեղանի աշխատանքային մասը, ջեռոցները/սալօջախները և լվացարանները խոնավ լաթով մաքրելը և ձեռքերը լվանալն ու չորացնելը:

Նշում. Ճաշից հետո մաքրությունը չի ներառում սառնարանի, սալօջախի/ջեռոցի կամ սեղանի աշխատանքային մասի ու լվացարանի ընդհանուր մաքրությունը: Այս ծառայությունները գնահատվում են որպես Տնային ծառայություններ:

Նշում. 2ոնդային սնուցում: Եթե շահառուի սննդի ընդունումն ամբողջությամբ իրականացվում է զոնդի միջոցով, շահառուն պետք է դասակարգվի որպես «1-ին» կարգի պատկանող թե՛ ճաշի պատրաստման, թե՛ ուտելու համար, քանի որ զոնդային սնուցումը համարվում է Հարբժշկական ծառայություն (MPP 30-756.41):

Կարգ 1-ին - Անկախ. Կարող է պլանավորել, պատրաստել, մատուցել ճաշերը և մաքրել ուտելուց հետո:

- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուի շարժունակությունը թվում է տկարացած:
- Օրինակ. Շահառուն եփում և սառեցնում է մնացած սնունդը հետո տաքացնելու համար:
- Չարգ, որը կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք ի վիճակի՞ եք եփել ձեր սեփական ճաշերը և մաքրել ուտելուց հետո: Դուք պահպանո՞ւմ եք հատուկ սննդակարգ: Եթե այո, նկարագրեք:
- Կարգ 2-րդ** - Ճաշացանկերը կազմելիս, ճաշերը պատրաստելիս և/կամ ուտելուց հետո մաքրելիս ունի միայն հիշեցնելու կամ ուղղորդելու կարիք:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Շահառուն մոռացկոտ է թվում: Տանը կա փչացած սնունդ, սառնարանում սնունդ չկա, կա միայն Twinkies®-ի պաշար: Շահառուի հագուստները շատ մեծ են, ինչը խոսում է քաշի հավանական կորստի մասին: Եփել-թափելու նշաններ չկան:
- Օրինակ. Տարեց շահառուն չի կարողանում պլանավորել բալանսավորված սնունդը, չի կարողանում իմանալ ինչ ուտել, այդ պատճառով ուտում է շատ քաղցրավենիք ու բուլտերբրոդներ, թոռնիկին ուղարկում է արագ սնունդ գնելու: Շահառուն ամանները թողնում է բազմոցի կողքին՝ այնտեղ, որտեղ ուտում է, կրկին կօգտագործի կեղտոտ ամանները, եթե չհիշեցնեն լվանալու և չորացնելու մասին:
- Չարգ, որը կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք ի վիճակի՞ եք պատրաստել ձեր սեփական ճաշերը և մաքրել ուտելուց հետո:
- Կարգ 3-րդ** - Ունի մեկ այլ անձի կարիքը ամեն օր հիմնական ճաշ(եր)ը պատրաստելու և ճաշից հետո մաքրելու համար (օր. շահառուն կարող է տաքացնել մեկ ուրիշի պատրաստած ճաշերը, կարող է պատրաստել պարզ ճաշեր և(կամ) ունի օգնության կարիք ճաշից հետո մաքրելու համար, սակայն ավելի բարդ ճաշեր պատրաստելու համար, որի դեպքում պետք է կլպել, կտրտել և այլն և ճաշից հետո հավաքելու և մաքրելու համար ունի մեկ այլ անձի օգնության կարիքը գրեթե ամեն օր):

- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք շահառուի շարժունակությունը տկարացած է, արդյո՞ք նա թույլ է և դիմացկուն չէ կամ ունի տեսողության լուրջ խնդիր, արդյո՞ք նա սնվում և ընդունում է հեղուկներ ադեկվատ կերպով:
 - Օրինակ. Շահառուն կարող է տաքացնել ճաշերը, պատրաստել սենդվիչ և փաթեթավորումից հանել թեթև ուտեստները: Շահառուի արթոհոը թույլ չի տալիս նրան որևէ բան բռնել, նա չի կարողանում լվանալ ամանները, քանի որ չի կարող բռնել դրանք:
 - Հարց, որը կարող է տալ սոցիալական աշխատողը. Ի՞նչ տիպի ճաշեր եք կարողանում պատրաստել ինքներդ ձեզ համար: Կարո՞ղ եք բարձրացնել ջեռոցի թավաներն ու տապակները: Կարո՞ղ եք տաքացնել ճաշերը, որոնք պատրաստվել են ձեզ համար որոշ ժամանակ առաջ: Դուք ի վիճակի՞ եք լվանալ ամանները: Կարո՞ղ եք սրբել խոհանոցի սեղանն ու սալօջախը:
- Կարգ 4-րդ** - Ունի մեկ այլ անձի կարիքը ամեն օր հիմնական ճաշ(եր)ը պատրաստելու և ճաշից հետո մաքրելու համար:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Շահառուն ունի շարժունակության և դիմացկունության խնդիրներ և իրերը բռնելու սահմանափակ ուժ:
 - Օրինակ. Շահառուն չի կարողանում կանգնել երկար ժամանակ: Շահառուն կարող է սառնարանից հանել թեթև ուտեստները, օրինակ՝ մրգեր ու սառը ըմպելիքներ, կարող է հանել վարսակաձավարը կամ պատրաստել հացի տոստեր նախաճաշի համար և այլն:
 - Հարց, որը կարող է տալ սոցիալական աշխատողը. Կարո՞ղ եք կանգնել երկար ժամանակով, որպեսզի սալօջախի մոտ պատրաստեք, լվանաք, չորացնեք և տեղավորեք ամանները և/կամ սպասքեղենը տեղավորեք սպասք լավանալու մեքենայում կամ հանել դրանից:
- Կարգ 5-րդ** - Բոլոր ճաշերը պատրաստելու և դրանից հետո մաքրություն անելու համար ամբողջովին կախված է մեկ այլ անձից:

- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուն ունի շարժունակության լուրջ ինդիքներ կամ արդյոք ամբողջովին ապակողմնորոշված է և անապահով է սալօջախի մոտ:
- Օրինակ. Շահառուն ունի շիզոֆրենիա: Շահառուն կարծում է, որ երբ թրջվի, ջուրը կարող է այլ մարդկանց հնարավորության տալ կարդալ իր մտքերը: Խնամատուն սնունդը կտրտում է կծելու համար հարմար չափսերի և սկուտեղը տանում է անկողնուն գամված շահառուի մոտ:
- Յարգ, որը կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք ի վիճակի՞ եք ինքներդ պատրաստել ուտելու բան ձեզ համար: Արդյո՞ք ձեր սնունդը կամ ըմպելիքները պետք է որևէ հատուկ ձևով պատրաստվեն: Դուք կարո՞ղ եք լվանալ ամանները:

Ճաշի պատրաստում/Մաքրություն ճաշից հետո. MPP բաժիններ 30-757.131 և 30-757.132

<p><u>Գործերի համար անհրաժեշտ ընդհանուր ժամաքանակ</u></p> <p>(Նախքան Գործերի համար անհրաժեշտ ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ համեմատելը)</p>	<p><u>Գործառույթային ցուցանիշի կարգ.</u></p>	<p><u>Համեմատում Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ</u></p> <p>(շաբաթական ժամեր)</p>
--	---	---

Ճաշի պատրաստում. MPP բաժին 30-757.131

Շաբաթական ժամեր. _____

Կարգ 2-րդ 3:01-ից 7:00

Կարգ 3-րդ 03:30-ից 7:00

Կարգ 4-րդ 05:15-ից 7:00

Կարգ 5-րդ 07:00-ից 7:00

Մաքրություն ճաշից հետո. MPP բաժին 30-757.132

Շաբաթական ժամեր. _____

Կարգ 2-րդ 01:10-ից 03:30

Կարգ 3-րդ 01:45-ից 03:30

Կարգ 4-րդ 01:45-ից 03:30

Կարգ 5-րդ 02:20-ից 03:30

Արդյո՞ք անհրաժեշտ են Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի բացառություններ:

Այո Ոչ

Նշել բացառությունների պատճառները. _____

Քայլելու կարողություն (նախկինում՝ շարժունակություն ներսում). MPP բաժին 30-757.14(K)

Օգնություն շահառուին տան ներսում մի տեղից մյուսը քայլելու կամ տեղափոխվելու համար, այդ թվում՝ գնալ դեպի լոգասենյակ և հետ գալ, բարձրանալ և իջնել աստիճանները, քայլել և վերցնել օժանդակող սարքերը, օրինակ ձեռնափայտը, քայլակը, անվասայլակը և այլն և լվանալ/չորացնել ձեռքերն այս գործերն անելուց առաջ և հետո: Շարժունակությունը ներառում է նաև օգնություն դեպի ավտոմեքենայի առջևի դուռը գնալու և հետ գալու համար (ներառյալ ավտոմեքենա նստելը և իջնելը), որպես ուղեկցում բժշկական այցելության և(կամ) այլընտրանքային ռեսուրսային կենտրոն:

- Կարգ 1-ին** – Անկախ. Չունի ֆիզիկական օգնության կարիք, չնայած շահառուն կարող է զգալ որոշակի դժվարություն կամ անհարմարություն: Առաջադրանքի կատարումը նրա անվտանգությունը վտանգի չի ենթարկում:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք շահառուն կայուն կանգնում է ոտքերի վրա, ի վիճակի է մանևրել կահույքի շուրջը և այլն: Դիտարկել, թե արդյո՞ք շահառուին պետք է բռնվել կահույքից կամ պատերից, որպեսզի կայուն կանգնի: Արդյո՞ք շահառուն ցուցադրում է ձեզ տունը և դիտարկել նրա շարժունակությունը:
- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք երբևէ ունեցե՞լ եք դժվարություն տեղաշարժվելիս: Դուք երբևէ օգտագործե՞լ եք ձեռնափայտ կամ քայլակ: Դուք ձեզ ապահո՞վ եք զգում ձեր տանը մենակ քայլելիս:

- **Կարգ 2-րդ** – Կարող է տեղաշարժվել անկախ, ունի միայն հիշեցման և աջակցության կարիք (օր.՝ ունի օրթեզն ամրացնելու, անվասայլակն ապաբլոկավորելու կամ ձեռնափայտ կամ քայլակ օգտագործելու համար հիշեցման կարիք):
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք շահառուն կարող է օգտագործել իր քայլակը կամ ձեռնափայտն իր կամքով, արդյո՞ք շահառուն կարող է նորմալ հենվել որևէ հարմարանքի վրա, արդյո՞ք երևում է որևէ օժանդակ սարք անկյունում, այլ ոչ շահառուի կողքին, երբ նա նստած է, ինչպե՞ս է շահառուն կարողանում է տեղաշարժվել օժանդակ սարքի միջոցով, արդյո՞ք տանը նկատվում են ձևափոխություններ, օրինակ բռնակներ և այլն:
- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք երբևէ ունեցե՞լ եք խնդիրներ ձեր սարքն օգտագործելու հետ: Եղե՞լ է ժամանակ, երբ դուք կորցրել եք հիշողությունը և հայտնվել եք մի տեղում և ունեցել եք օգնության կարիք հետ գալու համար կամ չեք ցանկացել օգտագործել ձեր սարքը: Ի՞նչ է տեղի ունեցել այնուհետև: Վերջերս երբևէ ընկե՞լ եք: Նկարագրեք:
- **Կարգ 3-րդ** – Ունի մեկ այլ անձի օգնության կարիքը հատուկ մանևրումներ կատարելու համար, օր.՝ անվասայլակը սուր անկյան շուրջը հրելը, աստիճաններով բարձրացնելը կամ որոշակի մակերեսներով քշելը:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք շահառուն ունի ձեզնից օգնություն խնդրելու կարիք, արդյո՞ք թվում է, թե շահառուն պայքարում է մանևրելու համար, ինչը նրան կարող է վտանգի ենթարկել, եթե մնա առանց հսկողության, արդյո՞ք շահառուն այնքան ուժ ունի, որ կկարողանա օգտվել օժանդակ սարքից, արդյո՞ք տանը կան ճարտարապետական խոչընդոտներ:
- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Եղե՞լ են ժամանակներ, երբ դուք ունեցել ինչ-որ մեկին հենվելու կարիք, որպեսզի տեղաշարժվեք տանը: Ի՞նչ տեսակի օգնություն է ձեզ հարկավոր և երբ: Ի՞նչ է պատահում, երբ չկա որևէ մեկը ձեզ օգնելու համար: Կա՞ արդյոք ցերեկվա կամ գիշերվա մեջ որոշակի ժամանակահատված, երբ տեղաշարժվելը ձեզ համար ավելի դժվար է: Արդյո՞ք ձեր տան բոլոր հատվածները հասանելի են ձեզ համար:

- **Կարգ 4-րդ** – Մեծ մասամբ ունի մեկ այլ անձի օգնության կարիքը: Վտանգի տակ է, եթե մնա առանց օգնության:
 - Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք շահառուն կարող է պատասխանել դռան զանգերին, անվտանգ կերպով վերադառնալ իր նստած վայրը, արդյո՞ք կան հատակին թափված աղբի կտորներ, աղտոտ գորգ կամ աստիճաններ, արդյո՞ք ունի ակնհայտ թուլություն կամ հևոց, արդյո՞ք շահառուի մարմնի վրա կան կապտուկներ, մաշկի կոշտացումներ, բշտեր կամ այրվածքներ (ընկնելու նշաններ):
 - Յարգեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Արդյո՞ք տանն ունեք մեկը, ով ձեզ այժմ օգնում է: Եթե այո, ապա ինչ չափով է օգնությունը:
- **Կարգ 5-րդ** – Տեղաշարժման համար ամբողջովին կախված է ուրիշներից: Անվասայլակում կամ բժշկական սայլակում մշտապես պետք է տանել, բարձրացնել կամ օգնել նստել:
 - Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք շահառուն ունի ակնհայտ անշարժություն, արդյո՞ք նա անհարմարություն կամ ցավեր ունի, արդյո՞ք նա ունի տեղաշարժվելու հետ կապված վախեր, արդյոք նա հայտնում է իր կարիքների մասին:
 - Յարգեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Ո՞վ կա, որ կարող է օգնել ձեզ, երբ ցանկանում եք տեղաշարժվել: Արդյո՞ք գտնում եք, որ այդ անձը կարող է անել նշվածը առանց իրեն անհարկի ցավ կամ անհարմարություն պատճառելու: Կա՞ մի բան, որը փոխելու դեպքում ձեզ համար ավելի մեծ հարմարավետություն կստեղծվի:

Տեղաշարժում. MPP բաժին 30-757.14(k)

Գործերի համար անհրաժեշտ ընդհանուր ժամաքանակ

(նախքան Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ համեմատելը) Գործառույթային ցուցանիշի կարգ

Չամենատում Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ (շաբաթական ժամեր)

Շաբաթական ժամեր. _____

- 2 0:35-ից 1:45
- 3 01:00-ից 02:06
- 4 01:45-ից 03:30
- 5 01:45-ից 03:30

Արդյո՞ք անհրաժեշտ են Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի բացառություններ:

Այո Ոչ

Նշել բացառությունների պատճառները. _____

Լոգանք, բերանի խոռոչի հիգիենա և արտաքին ինամք, ամենօրյա լվացումներ անկողնում. MPP բաժիններ 30-757.14 (d) և 30--757.14 (e)

Լոգանքը (լոգարանում/լոգախցիկում) ներառում է մարմնի մաքրումը լոգարանում կամ ցնցուղի տակ, ջրի/լոգանքի պարագաներ բերելը և դրանք տեղավորելը, ծորակների բացելը/փակելը և ջրի ջերմաստիճանի կարգավորումը, օգնություն լոգարան կամ լոգախցիկ մտնել և դուրս գալու հարցում, օգնել, որ լողանալու, ջրցայելու, չորացնելու համար ձեռքը հասնի մարմնի բոլոր մասերին, օգնություն լոսյոն, մարմնի փոշի, օժանելիք օգտագործելու հարցում և ձեռքերը լվանալու/չորացնելու համար:

Բերանի խոռոչի հիգիենան ներառում է ատամի մածուկը խոզանակի վրա հանելը, ատամները խոզանակով մաքրելը, բերանն ողողելը, ատամի պրոթեզների խնամքը, ատամնաթելի օգտագործումը և ձեռքերը լավանալը/չորացնելը:

Արտաքին խնամք ներառում է մազերի սանրումը, մազերը կտրելը, եթե շահառուն չի կարող վարսավիրի մոտ կամ վարսավիրանոց գնալ, շամպունի, մազերի բալզամի օգտագործումը և մազերի չորացումը, սափրումը, ձեռքի և ոտքերի մատների եղունգների կտրտելը, եթե այդ ծառայությունները շահառուի համար չեն գնահատվում որպես Հարբժշկական ծառայություններ, ինչպես նաև ձեռքերը լվանալը/չորացնելը:

Նշում. Լոգանքի, բերանի խոռոչի հիգիենայի և արտաքին հարդարման մեջ չեն մտնում լոգասենյակ գնալը և դուրս գալը: Այդ գործերը Շարժունակության ծառայությունների շրջանակում գնահատվում են որպես շարժունակություն:

Անկողնում ամենօրյա լվացումներն են լվացարանի և անկողնում սպունգով մարմնի լվացում կատարելու նյութերի մաքրումը և տեղավորումը, ջուր և լոգանքի այլ պարագաներ բերելը, մարմինը լվանալը, ջրցայելը, չորացնելը, լոսյոնի, մարմնի փոշու, օժանելիքի օգտագործումը և ձեռքերը լոգանքից առաջ և հետո լվանալը/չորացնելը:

- Կարգ 1-ին** - Անկախ. Ի վիճակի է լողանալ, մաքրել ատամները և հարդարվել ինքուրույն՝ առանց մեկ այլ անձի օգնության:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուի շարժունակությունը տկարած չէ, արդյոք շահառուն մաքուր է և լավ հարդարված, արդյոք լոգասենյակում կա որևէ օժանդակ հարմարանք:
- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Ձեզ երբևէ՞ անհրաժեշտ լինում է օգնություն լոգանք ընդունելիս, բերանի խոռոչի հիգիենայով զբաղվելիս կամ հարդարվելիս: Դուք կարողանո՞ւմ եք ինքնուրույն մտնել լոգարան կամ լոգախցիկ և դուրս գալ այնտեղից: Դուք երբևէ ընկե՞լ եք:

- **Կարգ 2-րդ** - Ի վիճակի է լոգանք ընդունել, մաքրել ատամները և հարդարվել ինքուրույն ուղղություն ցույց տալու դեպքում կամ պարբերական վերահսկողության ներքո: Կարող է ունենալ անձնական հիգիենան պահպանելու հիշեցման կարիք:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուի մարմից հոտ է գալիս, մազերը լվացած չեն, մարմինը կեղտոտ է, ունի չհարդարված մատներ, արդյոք շահառուն սափրված չէ, բերանի խոռոչը մաքուր չէ կամ ընդհանուր առմամբ արտաքինը վատ է խնամված, արդյոք շահառուն տեղյակ չէ իր արտաքին տեսքից:
- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Եղե՞լ են ժամանակներ, երբ դուք մոռացել եք լոգանք ընդունել, մաքրել ձեր ատամները և հարդարվել ինքնուրույն կամ արդյո՞ք դա ձեզ շատ հոգս է պատճառում: Կա՞ որևէ մեկը, ով օգնում է կազմակերպել ձեր լոգանք կամ ցնցուղ ընդունելը:
- **Կարգ 3-րդ** - Ընդհանուր առմամբ կարող է ինքուրույն լոգանք ընդունել և հարդարվել, սակայն մարմնի որոշ հատվածների խնամքի համար ունի օգնության կարիք (օր.՝ լոգախցիկ կամ լոգարան մտնելիս և դուրս գալիս, մազերը շամպունելիս կամ ատամները մաքրելիս):
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուն ունի թուլություն կամ ցավ վերջույթներում կամ հոդերում, դժվարություն թևերը դեպի գլխավերև բարձրացնելիս, զառամյալություն, ընդհանուր թուլություն, անկայուն կեցվածք, ինչը կարող է անվտանգությունը վտանգել, արդյոք լոգասենյակը չունի շահառուի անվտանգությունն ապահովող հարմարություններ (օր.՝ բռնակներ, լոգարանի նստարան), արդյոք շահառուի արտաքին հարդարանքը ցույց է տալիս, որ նա ունի չբավարարված կարիք:
- Օրինակ. Շահառուն ունի շարժունակության պակասի հետ կապված վախեր:
- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Կա՞ն լոգանք ընդունելու, բերանի խոռոչի հիգիենայի կամ հարդարման հետ կապված գործեր, որոնց համար ձեզ անհրաժեշտ է օգնություն: Որո՞նք են: Ե՞րբ է պետք եղել: Ինչպե՞ս եք մտնում լոգարանի կամ լոգախցիկի մեջ: Դուք երբևէ՞ ձեզ

անվտանգ զգացել եք լոգասենյակում: Երբևէ պատահար ունեցե՞լ եք լոգանքի ժամանակ: Ի՞նչ կանեիք, եթե ընկած լինեիք:

- Կարգ 4-րդ** - Լոգանք ընդունելիս, բերանի խոռոչը մաքրելիս կամ հարդարվելիս մեծ մասամբ զգում է ուղղակի աջակցության կարիք : Մենակ մնալու դեպքում կարող է վտանգի տակ լինել:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուն ունի օգնության կարիք տեղաշարժման ժամանակ, ունի խիստ սահմանափակ շարժումներ, թուլություն, վատ հավասարակշռում, հոգնածություն, մաշկային խնդիրներ (որոնք ցույց են տալիս, որ անվտանգությունը վտանգված է): Սահմանել, թե որքանով է հասանելի և ինչպես է ձևափոխված լոգասենյակը, որպեսզի բավարարի շահառուի կարիքներին:
- Չարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Ի՞նչ չափի օգնություն է պետք ձեզ, որ կարողանաք լոգանք ընդունել կամ լվանաք մազերը: Եթե չլինեք ձեզ օգնող որևէ մեկը, ինչը՞ կմնար չկատարված: Դուք ունենո՞ւմ եք ձեր մարմնի մասի զգացողության կորուստ: Ունե՞ք լոգանքի հետ կապված վախեր: Երբևէ՞ ընկել եք լոգարան կամ լոգախցիկ մտնելուց կամ դուրս գալուց: Ի՞նչ կանեիք, եթե ընկած լինեիք:
- Կարգ 5-րդ** - Լոգանք ընդունելու, բերանի խոռոչը մաքրելու և հարդարվելու համար ամբողջովին կախված է ուրիշներից:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուն ինքնակամ տեղաշարժվում է և ուր է գնում, արդյոք շահառուի մաշկի գույնը լավ է, առողջ է, մաշկը և մազերը մաքուր են, արդյոք լոգանքի հաճախականությունն ու լոգանքը ճիշտ ձևով են կատարվում հատուկ հաշմանդամություն/սահմանափակումներ ունեցող շահառուի համար:
- Չարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք գո՞հ եք ձեր լոգանքից, բերանի խոռոչի հիգիենայից և ամենօրյա հարդարումից: Կա՞ մի բան, ինչը վախեցրել է ձեզ կամ խուճապ է առաջացրել ձեզ մոտ, երբ լոգանք եք ընդունում:

Լոգանք, բերանի խոռոչի հիգիենա և արտաքին խնամք, ամենօրյա լվացումներ անկողնում.

MPP բաժիններ 30-757.14 (d) և 30-757.14 (e)

<p><u>Գործերի համար անհրաժեշտ ընդհանուր ժամաքանակ</u></p> <p>(նախքան Գործերի համար անհրաժեշտ ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ համեմատելը)</p>	<p><u>Գործառույթային ցուցանիշի կարգ.</u></p>	<p><u>Համեմատում Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ</u></p> <p>(շաբաթական ժամեր)</p>

Լոգանք, բերանի խոռոչի հիգիենա և հարդարում. MPP բաժին 30-757.14 (d)

Շաբաթական ժամեր. _____

- Կարգ 2-րդ 00:30-ից 01:55
- Կարգ 3-րդ 01:16-ից 03:09
- Կարգ 4-րդ 02:21-ից 04:05
- Կարգ 5-րդ 03:00-ից 05:06

Յիգիենիկ լվացումներ անկողնում. MPP բաժին 30-757.14 (e)

Շաբաթական ժամեր. _____

Կարգ 2-րդ 00:30-ից 01:45

Կարգ 3-րդ 01:00-ից 02:20

Կարգ 4-րդ 01:10-ից 03:30

Կարգ 5-րդ 01:45-ից 03:30

Արդյո՞ք անհրաժեշտ են Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի բացառություններ:

Այո Ոչ

Նշել բացառությունների պատճառները. _____

Յիգիենիկ լվացումներ անկողնում. MPP բաժին 30-757.14 (e)

Շաբաթական ժամեր. _____

Կարգ 2-րդ 00:30-ից 01:45

Կարգ 3-րդ 01:00-ից 02:20

Կարգ 4-րդ 01:10-ից 03:30

Չագնվելու կարողություն/Պրոթեզային սարքեր (հագնովի). MPP բաժին 30-757.14(f)

Չագնվելու կարողություն/Պրոթեզային սարքեր (հագնելը) Չագնել/հանել, ամրացնել/թուլացնել, կոճկել/քանդել կոճակները, փակել/բացել ճարմանդը, կապել/քանդել արտաքին հագուստը, ներքանահագուստը, կորսետները, էլաստիկ գուլպաները, օրթեզները և պրոթեզային սարքերը, փոխել աղտոտված հագուստը և շահառուի մոտ բերել գործիքներ, որոնք կօգնեն նրան ինքնուրույն հագնվել:

- Կարգ 1-ին** - Անկախ. Ի վիճակի է հագնել, ամրացնել կամ հանել բոլոր տեսակի հագուստները: Չագնվում է ինքուրույն՝ չվնասելով առողջությանն ու անվտանգությանը:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուն համապատասխան է հանգված, արդյոք հագուստը կոճկված է, ճարմանդը փակ է, հագուստը համապատասխանաբար կարկատված է, արդյոք շահառուն ոչ մի դժվարություն չունի ձեռքով փոքր շարժումներ անելու, ինչպես ցույց է տվել դիմումն ստորագրելու իր կարողությամբ:
- Չարց. որը կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք երբևէ ունեցե՞լ եք դժվարություն հագնվելիս (օր. հագուստի կոճակները կոճկելիս կամ ճարմանդը փակելիս):
- Կարգ 2-րդ** - Կարող է ինքնուրույն հանգվել, սակայն ունի հիշեցման կամ ուղղություն ցույց տալու կարիք:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուի հագուստը համապատասխանում է սենյակի ջերմաստիճանին կամ արդյոք շահառուի հագուստը տարօրինակ է (օր. ներքնազգեստը հագել է արտաքին հագուստի վրայից), արդյոք հագուստը կոճկած է, ճարմանդը փակ է, անցքերը կարված են, արդյոք հագուստը հարաբերականորեն մաքուր է, անհրաժեշտության դեպքում կարկատած է, համապատասխանում է շահառուի ճիշտ չափսին, արդյոք շահառուն կույր է, արդյոք շահառուն տեղեկացված և տեղյակ է իր տեսքի մասին:

- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Կամ ժամանակ, երբ ձեզ համար հազնվելը պարզապես չափից մեծ հոգս է օրվա մեջ: Որևէ մեկը երբևէ՞ մեկնաբանություն արել է ձեր հագուկապի վերաբերյալ: Ձեր հագուկապը բավականաչափ տա՞ք է, թե չափից շատ տաք է: Դուք կկարողանա՞յի՞ք օրվա մեջ ձեր հագուկապը կազմակերպելու համար օգտվել որևէ մեկի օգնությունից:
- **Կարգ 3-րդ** - Ի վիճակի չէ ինքնուրույն ամբողջովին հազնվել առանց մեկ այլ անձի օգնության (օր. կապել կոշիկի կապերը, կոճկվել, օգտագործել ճարմանդը, հազնել տաբատը կամ պրոթեզային սեղմակը և այլն):
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուի հագուկապները ճիշտ են կապված, արդյոք շահառուն ներողություն է խնդրում կամ անհանգստացած է իր հագուկապի վիճակի համար, արդյոք շահառուն խնդրում է ձեզ օգնել, արդյոք շահառուի հիմնական ձեռքն ունի հաշմանդամություն, արդյոք շահառուի շարժումների մեծ մասը, բռնելու ունակությունը, ձեռքով փոքր շարժումները տկարացած են, արդյոք շահառուն ունի հատուկ հագուկապի կարիք:
- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Կա՞ն հագուկապի տեսակներ, որոնք դժվարությամբ եք հազնում կամ ամրացնում: Ձեզ անհրաժեշտ է օգնություն հազնվելու համար նախքան ամբողջությամբ հազնվելը: Ձեզ անհրաժեշտ է օգտագործել հատուկ սարք հազնվելու համար: Դուք օգտագործում եք Velcro® ֆիբմայի կաշուկներ:
- **Կարգ 4-րդ** - Անկարող է ինքնուրույն հազնել շորերի մեծ մասը: Առանց օգնության շահառուն կհազնվի ոչ համապատասխան կամ ոչ ադեկվատ կերպով:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուի շարժումների մեծ մասը և ընդհանուր շարժունակությունը տկարացած են: Դիտարկել, թե ինչպես է հազնված շահառուն՝ անկողնային պիժամայով է, տնային հագուկապով ու հողաթափերով է, թե ավելի շուտ դրսի հագուկապով է, արդյոք շահառուի հագուկապը չափից շատ տաք է կամ չափից շատ բարակ է սենյակի ջերմաստիճանի համեմատ, արդյոք թվում է, թե շահառուն փորձում է հարմարվել հազնվելու այլընտրանքային մեթոդներին:

- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք զգու՛մ եք, որ չեք կարողանում հազնվել, կամ ունենո՛ւմ եք այցելուներ, քանի որ դուք անկարող եք համապատասխան կերպով հազնվել: Դուք երբևէ՞ շոգ կամ ցուրտ զգում եք, քանի որ չեք կարողանում հազնել կամ հանել անհրաժեշտ հագուստը ձեզ ավելի հարմարավետ զգալու համար: Ձեր առողջությունը երբևէ վնասվե՛լ է, քանի որ չեք կարողացել դեղորայքն ընդունել կամ հազնվել եղանակին կամ ջերմաստիճանին համապատասխան:
- Կարգ 5-րդ** - Անկարող է ընդհանրապես ինքնուրույն հանգվել, ունի մեկ ուրիշի լիարժեք օգնության կարիքը:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուն ի վիճակի է ինքնակամ շարժվել: Արդյոք շահառուի հագուստը թվում է հարմար և մաքուր է, արդյոք շահառուն թվում է գոհ իր հագուստից: Սահմանել, թե արդյոք շահառուն կնախընտրեր ողջ ժամանակ կրել ավելի շուտ արտաքին հագուստ և կոշիկներ, քան տնային հագուստ և հողաթափեր:
- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Ինչպե՛ս եք փոխում ձեր հագուստը: Դուք երբևէ զգու՛մ եք, որ հազնված եք չափից շատ տաք կամ չափից շատ բարակ: Արդյո՞ք ձեր հագուստը բավականաչափ հարմար և մաքուր է: Արդյո՞ք փոխում եք հագուստն այն հաճախականությամբ, որքան որ զգում եք անհրաժեշտություն:

Հազնվելու կարողություն/Պրոթեզային սարքեր (հազնելը) MPP բաժիններ 30-757.14(f) և 30-757.14(i)

<u>Գործերի համար անհրաժեշտ ընդհանուր ժամաքանակ</u>	<u>Գործառուության գուճանիշի կարգ.</u>	<u>Համեմատում Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ</u>
(նախքան Գործերի համար անհրաժեշտ ժամաքանակի		<i>(շաբաթական ժամեր)</i>

հաշվարկման ուղեցույցի հետ համեմատելը)		
--	--	--

Ջազնվելու կարողություն. MPP բաժին 30-757.14(f)

Շաբաթական ժամեր. _____

Կարգ 2-րդ 00:34-ից 01:12

Կարգ 3-րդ 01:00-ից 01:52

Կարգ 4-րդ 01:30-ից 02:20

Կարգ 5-րդ 01:54-ից 03:30

Պրոթեզային սարքեր. MPP բաժին 30-757.14(i)

Շաբաթական ժամեր. _____ Կարգ՝ Կիրառելի չէ 0:28-ից 1:07

Արդյո՞ք անհրաժեշտ են Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի բացառություններ:

Այո Ոչ

Նշել բացառությունների պատճառները. _____

Աղիների, միզապարկի և դաշտանային խնամք. MPP բաժիններ 30-757.14(a) և 30-757.14(j)

Աղիների, միզապարկի և դաշտանային խնամք. Օգնել անձին օգտվել գիշերանոթներից/անկողնու կողքը տեղադրվող աթոռ-զուգարանից, մեզընդունիչներից, ստոմայից, հոգնայից և/կամ կաթետրային ընկալիչներից, դատարկել և մաքրել դրանք, օգտագործել տակդիրներ, դիրքը փոխել տակդիրը փոխելու համար, հագնել հագուստները, փոխել ներքնակի մեկանգամյա օգտագործման միջադիրները, հագնել/հանել մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ, խոնով մաքրել և սրբել շահառուի մարմինը, օգնել նստել/վեր կենալ աթոռ-զուգարանից կամ զուգարանակոնքից և լվանալ/չորացնել ձեռքերը: Դաշտանային խնամքը սահմանափակվում է հիգիենիկ միջադիրի արտաքին օգտագործմամբ և արտաքին մաքրման և հիգիենիկ միջադիրը փոխելու համար դիրքը փոխելով, ներքնակի մեկանգամյա օգտագործման միջադիրների օգտագործմամբ և/կամ հեռացնելով, հագուստը հագնելու կազմակերպմամբ, մարմինը խոնավ մաքրելով և սրբելով և ձեռքերը լվանալով ու չորացնելով:

Նշում. Այս առաջադրանքը չի ներառում հոգևանների, կաթետրների, մոմիկների, աղիների մաքրման ծրագրի մաս կազմող թվային խթանում կամ կոլոստոմիայի ողողում: Այդ գործերը գնահատվում են որպես

Հարբժշկական ծառայություններ: Դաշտանային խնամքի ծառայությունները գնահատելիս՝ հնարավոր է անհրաժեշտ լինի գնահատել լրացուցիչ ժամանակի կարիքն այլ կատեգորիայի ծառայությունների համար, օրինակ՝ Լվացք, Հագցնել, Տնային գործեր, Լոգանք, Բերանի խոռոչի հիգիենա և Հարդարում: Նաև, եթե շահառուն կրում է տակդիրներ, դաշտանային խնամքի համար ժամանակ պետք է անհրաժեշտ չլինի:

- Կարգ 1-ին** - Անկախ. Ի վիճակի է կատարել աղիների, միզապարկի և դաշտանային խնամք առանց մեկ այլ անձի օգնության:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուի շարժունակությունը տկարացած չէ և արդյոք գալիս է մեզի հոտ, արդյոք շահառուն ունեցել է հաստաղիի քաղցկեղ, դիտարկել, թե արդյոք շահառուն կրում է կոլոստոմիայի կամ ստոմայի տոպրակ կամ արդյոք կան կոլոստոմիայի կամ ստոմայի տոպրակներ:
- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Չուզարանից օգտվելիս ձեզ որևէ օգնություն հարկավոր է: Կրոյո՞ք դուք օգտագործում եք նաև աթոռ-զուգարան մահճակալի կողքին, գիշերանոթ կամ մեզընդունիչ: Դուք որևէ խնդիր ունենո՞ւմ եք ժամանակին լոգասենյակ հասնելու հարցում:
- Կարգ 2-րդ** - Ունի միայն հիշեցման կամ ուղղություն ցույց տալու կարիք:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք շահառուն ունի ապակողմնորոշված կամ շփոթված տեսք, արդյո՞ք մեզի հոտ է գալիս, արդյո՞ք փափուկ կահույքը ծածկված է մեկանգամյա օգտագործման տակդիրով կամ ցելոֆանով, արդյո՞ք շահառուի ննջասենյակում կամ լոգասենյակում կան մեծահասակների տակդիրներ, արդյո՞ք շահառուն ընդունում է միզամուղներ, օրինակ Lasix®, արդյո՞ք շահառուի հագուստը կեղտոտ է, որը ցույց է տալիս, որ առկա են անմիզապահության հետ կապված խնդիրներ:
- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Անցյալ ամիս դժվարություն ունեցե՞լ եք ժամանակին զուգարան գնալու/աթոռ-զուգարանին նստելու հարցում: Եթե այո, որքա՞ն հաճախ: Որևէ մեկը հիշեցրե՞լ է ձեզ:

- **Կարգ 3-րդ** - Ունի նվազագույն օգնության կարիք որոշ գործողությունների համար, սակայն ինսամատուհի մշտական ներկայության անհրաժեշտությունը չկա:
 - Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուի մոտ կան շարժունակության միջին աստիճանի սահմանափակումներ, արդյոք շահառուն ունի ձեռքերն օգտագործելու լուրջ սահմանափակում, արդյոք շահառուն ունի տեղից շարժվելու համար հրելու կարիք:
 - Յարգել, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք ունե՞ք որևէ խնդիր լոգասենյակից օգտվելու կամ ձեր հագուստները կարգի բերելու հարցում: Որևէ մեկն օգնու՞մ է ձեզ: Եթե այո, ինչ տիպի օգնություն է ձեզ անհրաժեշտ և որքան հաճախ: Դուք ի վիճակի՞ եք դատարկել ձեր միզանոթը/աթոռ-գուգարանը (եթե օգտագործվել է): Դուք պատահարներ ունեցե՞լ եք: Ի՞նչ հաճախականությամբ են լինում պատահարները: Դուք ի վիճակի՞ եք մաքրել դրանցից հետո:
- **Կարգ 4-րդ** - Ի վիճակի չէ կատարել գործողությունների մեծ մասն առանց օգնության:
 - Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել շահառուի շարժունակության հետ կապված խնդիրների ծանրության աստիճանը, արդյո՞ք շահառուն չի կարողանում տեղաշարժվել առանց օգնության, շահառուի կամ ինսամատուհի տեղեկացումը ամենօրյա լվացքի քանակի կամ հաճախակիության վերաբերյալ և այն մասին, որ ամեն օր արվում է «ձեռքի» լվացք: Դիտարկել, թե արդյոք կա չլվացած լվացքի մեծ քանակ, որից մեզի կամ կղանքի հոտ է գալիս: Դիտարկել, թե արդյոք կան այնպիսի դեղամիջոցներ, ինչպիսիք են լուծողականները:
 - Յարգել, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Ո՞վ է օգնում ձեզ: Ինչպե՞ս: Նա մշտապես ձեր կողքի՞ն է, երբ ձեզ օգնություն է հարկավոր: Արդյո՞ք ձեզ անհրաժեշտ է ավելի շատ օգնություն ցերեկվա/գիշերվա որոշակի ժամերին:
- **Կարգ 5-րդ** - Ունի ֆիզիկական օգնության կարիք ինսամքի բոլոր տեսակների համար:

- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք շահառուն տեղաշարժվում է ինքնակամ, արդյո՞ք գամված է անկողնուն կամ անվասայլակին, արդյո՞ք շահառուն կարող է հայտնել իր կարիքների մասին:
- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Ո՞վ է օգնում ձեզ: Ինչպիսի՞ն է ձեր ամենօրյա կենցաղը: Արդյո՞ք ունեք նաև մեր կողմից որպես Հարբժշկական ծառայություններ դասակարգվող ծառայությունների կարիք:

Աղիների, միզապարկի և դաշտանային խնամք. MPP բաժիններ 30-757.14(a) և 30-757.14(j)

<u>Գործերի համար անհրաժեշտ ռնդհանուր ժամաքանակ</u>	<u>Գործառույթային ցուցանիշի կարգ.</u>	<u>Համեմատում Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ</u>
(նախքան Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ համեմատելը)		(շաբաթական ժամեր)

Աղիների և միզապարկի խնամք. MPP բաժին 30-757.14(a)

Շաբաթական ժամեր. _____

- Կարգ 2-րդ 00:35-ից 02:00
- Կարգ 3-րդ 01:10-ից 03:20
- Կարգ 4-րդ 02:55-ից 05:50
- Կարգ 5-րդ 04:05-ից 08:00

Դաշտանային խնամք. MPP բաժին 30-757.14(j)

Շաբաթական ժամեր. _____	Կարգ՝ Կիրառելի չէ	00:17-ից 00:48
---------------------------	-------------------	----------------

Արդյո՞ք անհրաժեշտ են Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի բացառություններ:

Այո Ոչ

Նշել բացառությունների պատճառները. _____

Տեղաշարժում (դիրքի փոփոխում). MPP բաժին 30-757.14(h)

Տեղաշարժում. Օգնություն կանգնած, նստած կամ պառկած դիրքերից մեկ այլ դիրքի և/կամ մի սարքավորումից կամ կահույքի կտորից դեպի մյուսը տեղաշարժվելիս: Դա ներառում է մահճակալից, աթոռից, թախտից, անվասայլակից, քայլակից կամ այլ օժանդակ սարքով տեղափոխումը հիմնականում նույն սենյակում:

Նշում. Տեղափոխումը չի ներառում գուգարանակոնքին/ նստելու վեր կենալու օգնությունը: Այս առաջադրանքը գնահատվել է որպես Աղիների, միզապարկի և դաշտանային խնամք: Պառկելախոցերի խնամք (մաշկի և վերքերի խնամք): Այս առաջադրանքը գնահատվել է որպես Հարբժշկական ծառայություններ:

- **Կարգ 1-ին** - Անկախ. Ի վիճակի է անվտանգ կերպով, առանց մեկ այլ անձի օգնության, կատարել բոլոր տեսակի տեղաշարժումները, չնայած շահառուն կարող է ունենալ որոշակի դժվարություն կամ անհարմարություն: Առաջադրանքի կատարումը նրա անվտանգությունը վտանգի չի ենթարկում:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք շահառուի շարժունակությունը տկարացած է, արդյո՞ք նա կարող է վեր կենալ աթոռից առանց օգնության, երբ ձեզ ցույց է տալիս տունը, արդյո՞ք նա քաշի ծանրությունը փոխում է նստած դիրքով:
- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Ձեզ երբևէ պետք եղե՞լ է օգնել մահճակալից կամ աթոռից վեր կենալու համար: Ե՞րբ է պետք եղել: Որքա՞ն հաճախ: Դուք երբևէ ունեցե՞լ եք դժվարություն տանը տեղաշարժվելիս:
- **Կարգ 2-րդ** - Կարող է տեղաշարժվել, սակայն ունի աջակցության կամ ուղղություն ցույց տալու կարիք:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուն շթոփված տեսք ունի և դժվարանում է վեր կենալ աթոռից (հավանաբար ավելի դժվարանում է մահճակալից վեր կենալիս): Սահմանել, թե արդյոք շահառուն վատ զգալու օրերին գամված է մահճակալին:
- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Որևէ մեկը ձեզ առավոտյան օգնու՞մ է վեր կենալ անկողնուց: Ինչպե՞ս է նա օգնում ձեզ:
- **Կարգ 3-րդ** - Որոշակի չափով ունի մեկ այլ անձի օգնության կարիքը (օր. ամեն օր պետք է օգնել վեր կենալ):
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե որքա՞ն ժամանակ է պահանջվում շահառուից մոտենալ մուտքի դռանը, ի՞նչ ձայներ են լսվում, երբ շահառուն մոտենում է դռանը, արդյո՞ք շահառուն խնդրում է ձեզ օգնել վեր կենալ դեղամիջոցները վերցնելու համար կամ ճոճվում է, երբ օգտագործում է օժանդակ սարք, արդյո՞ք շահառուն ճարպակալած է և մեծ դժվարությամբ է վեր կենում

- Չարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք մի՞շտ եք դժվարությամբ բարձրանում աթոռից: Ո՞վ է օգնում ձեզ: Ինչպե՞ս: Որքա՞ն հաճախ: Դուք նաև մահճակալի՞ց եք դժվարությամբ վեր կենում: Ի՞նչ տեսակի օգնություն է ձեզ հարկավոր (երբ հետաքրքրություն եք ցույց տալիս, թե ինչպես է շահառուն լուծել մի խնդիրը, դա սովորաբար խրախուսում է նրան պատմել, թե ինչպես է նա լուծել մյուս խնդիրները):
- Կարգ 4-րդ** - Ի վիճակի չէ կատարել տեղաշարժումների մեծ մասը առանց ֆիզիկական օգնության: Առանց օգնության մնալու դեպքում կարող է վտանգի տակ լինել:
 - Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք շահառուն օգտագործում է օժանդակ սարք տեղաշարժման համար, արդյո՞ք շահառուի հողերը դեֆորմացվել են արթրիտից կամ մեկ այլ հիվանդությունից, արդյո՞ք շահառուն կրում է նեցուկ կամ օրթեզ, արդյո՞ք որևէ մեկը տանն օգնում է շահառուին վեր կենալ, եթե նա օգտագործում է քայլակ կամ անվասայլակի մեջ է, արդյո՞ք շահառուի մարմնի վրա կան կապտուկներ, կոշտացումներ, բշտեր կամ այրվածքներ:
 - Չարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Ո՞վ է օգնում ձեզ: Ինչպե՞ս: Որքա՞ն հաճախ: Երկու դեպքում էլ՝ մահճակալից պառկել և վեր կենալը, աթոռին/անվասայլակին նստելը և բարձրանալը: Արդյո՞ք ձեզ անհրաժեշտ է ավելի շատ օգնություն ցերեկվա/գիշերվա որոշակի ժամերին:
- Կարգ 5-րդ** - Տեղաշարժումների համար ամբողջովին կախված է մեկ այլ անձից: Պետք է բարձրացնեն կամ մեխանիկորեն տեղափոխեն:
 - Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք շահառուն ունի ակնհայտ անշարժություն, արդյո՞ք նա անհարմարություն կամ ցավեր ունի, արդյո՞ք նա ունի տեղաշարժվելու հետ կապված վախեր, արդյո՞ք շահառուն հայտնում է իր կարիքների մասին:
 - Չարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Ո՞վ կա, որ կարող է օգնել ձեզ, երբ ցանկանում եք տեղաշարժվել: Արդյո՞ք գտնում եք, որ այդ անձը կարող է անել նշվածը առանց իրեն անհարկի ցավ

կամ անհարամարություն կատճառելու: Կա՞ մի բան, որը փոխելու դեպքում ձեզ համար ավելի մեծ հարմարավետություն կստեղծվի:

Տեղաշարժումներ. MPP բաժին 30-757.14(h)

<p><u>Գործերի համար անհրաժեշտ ընդհանուր ժամաքանակ</u></p> <p>(Նախքան Գործերի համար անհրաժեշտ ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ համեմատելը)</p>	<p><u>Գործառույթային ցուցանիշի կարգ.</u></p>	<p><u>Համեմատում Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ</u></p> <p>(շաբաթական ժամեր)</p>

Տեղաշարժում

Շաբաթական ժամեր. _____

Կարգ 2-րդ 00:30-ից 01:10

Կարգ 3-րդ 00:35-ից 01:24

Կարգ 4-րդ 01:06-ից 02:20

Կարգ 5-րդ 01:10-ից 03:30

Արդյո՞ք անհրաժեշտ են Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի բացառություններ:

Այո Ոչ

Նշել բացառությունների պատճառները. _____

Դիրքի փոփոխում/մաշկի տրորում. MPP բաժին 30-757.14(g)

Դիրքի փոփոխում/մաշկի տրորում. Ներառում է մաշկի տրորումը արյան շրջանառությունը լավացնելու և/կամ մաշկի ճաքճքումը կանխելու նպատակով, անկողնում թեքումը և այլ տեսակի դիրքափոխումներ և շարժումների վարժություններ, որոնք սահմանափակվում են հետևյալով.

- Վարժությունների ընդհանուր վերահսկողություն, որոնք շահառուին սովորեցրել է լիցենզավորված ֆիզիոթերապևտը կամ մեկ այլ բժիշկ-մասնագետ՝ վնասվածքի, չօգտագործման կամ հիվանդության պատճառով շարժունակության սահմանափակումը վերականգնելու համար:
- Պահպանողական թերապիա, երբ որակավորված թերապևտի մասնագիտական գիտելիքներ ու որոշում չի պահանջվում, իսկ վարժությունները համապատասխանում են հիվանդի կարողություններին ու դիմացկունությանը:
 - Այդպիսի վարժությունների թվին է պատկանում պահպանողական ծրագրերի իրականացումը (օր. վարժությունների կրկնումը օրգանիզմի գործառույթները պահպանելու, կեցվածքն ուղղելու, ուժերը կամ դիմացկունությունը պահպանելու համար, պասիվ վարժություններ պարալիզացված վերջույթների շարժումները պահպանելու համար և քայլում օժանդակությամբ):

Նշում. «Դիրքի փոփոխումը և մաշկի տրորումը» չի ներառում.

- Պառկելախոցերի խնամք (մաշկի և վերքերի խնամք): Սա գնահատվում է որպես «հարբժշկականի» մաս, որը սահմանված է MPP 30-757.19-ում:
- Պառկելախոցերի բուժում ուլտրամանուշակագույն ճառագայթներով (սարքի տեղադրում և հետևում) և(կամ) մաշկի վրա դեղորայք պարունակող քսուքների քսում: Այս առաջադրանքները MPP 30-757.14(i)-ում գնահատվել են որպես «օգնություն պրոթեզային սարքերի հետ» ծառայության մաս:

Այս ծառայության համար Գործառույթային ցուցանիշի կարգեր չկան

Դիրքի փոփոխում/մաշկի տրորում. MPP բաժին 30-757.14(g)

<p><u>Գործերի համար անհրաժեշտ ընդհանուր ժամաքանակ</u></p> <p>(նախքան Գործերի համար անհրաժեշտ ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ համեմատելը)</p>	<p><u>Գործառույթային ցուցանիշի կարգ.</u></p>	<p><u>Համեմատում Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ</u></p> <p>(շաբաթական ժամեր)</p>
<p>Շաբաթական ժամեր. _____</p>	<p>Կարգ՝ Կիրառելի չէ</p>	<p>00:45-ից 02:48</p>

Արդյո՞ք անհրաժեշտ են Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի բացառություններ:

Այո Ոչ

Նշել բացառությունների պատճառները. _____

Սննդի ընդունում. MPP բաժին 30-757.14(c)

Օգնություն սննդի ընդունման և ուտելու հետ համապատասխան քանակի հեղուկի ընդունման համար կամ առնչվող օգնություն այն շահառուներին, ովքեր չեն կարող ինքնուրույն ուտել կամ ովքեր ունեն ինքնուրույն սնվելու և համապատասխան քանակով հեղուկ ընդունելու համար հատուկ սարքերից օգտվելու այլ օգնության կարիք: Ուտելուն օժանդակող ծառայությունը ներառում է օգնություն ձեռքը սպասքեղենին ու բաժակներին երկարելու, դրանք վերցնելու և բռնելու հարցում, դեմքի ու ձեռքերի մաքրելը և խնամատուհի ձեռքերի վվանալը/չորացնելը:

Նշում. Այս ծառայությունը չի ներառում սննդի կտրատումը ուտելու համար մանր չափսերի կամ սննդից խյուս պատրաստելը, քանի որ այս առաջադրանքները գնահատվել են որպես ճաշի պատրաստման ծառայություններ:

Նշում. Չոնդային սնուցում: Եթե շահառուի սննդի ընդունումն ամբողջությամբ իրականացվում է զոնդի միջոցով, շահառուն պետք է դասակարգվի որպես «1-ին» կարգի պատկանող թե՛ ճաշի պատրաստման, թե՛ ուտելու համար, քանի որ զոնդային սնուցումը համարվում է Հարբժշկական ծառայություն ՏԵ՝ս MPP բաժին 30-756.41.

Կարգ 1-րդ - Անկախ. Ինքնուրույն կարող է սնվել:

- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուն դիմումն ստորագրելիս կամ դեղորայքի շքերը բռնելիս չի ցուցաբերում տկարություն բռնելու հարցում, արդյոք շահառուի աթոռի մոտ դրված է գավաթ կամ բաժակ, դիտարկել, թե ինչպես է շահառուն ընդունում ըմպելիքը:

- Չարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Արդյո՞ք ձեզ անհրաժեշտ է օգնություն ունելու ժամանակ (քանի որ հյուճուճը տեղի է ունենում աստիճանաբար, և ինքն իրեն կերակրելը ամենավերջին գործառույթն է, որ մարդը կորցնում է, հարցերի կարիք հնարավոր է չլինի, եթե շահառուն ի վիճակի է ինքնուրույն հագնվել, և նրա ընդհանուր գնահատականը 1 է Աղիների և միզապարկի խնամքի հարցում, բացի այն դեպքերից, երբ շահառուն թվում է մտավոր թերզարգացած):
- **Կարգ 2-րդ** - Կարող է սնվել ինքնուրույն, սակայն ունի բանավոր խոսքով օժանդակման, օրինակ ունելու մասին հիշեցնելու կամ օգնելու կարիք:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուն երևում է դեպրեսիվ, տխուր կամ ապակողմնորոշված, արդյոք շահառուի հագուստները մեծ են երևում իրեն համար, ինչը ցույց է տալիս վերջին շրջանում քաշի հնարավոր կորուստը, արդյոք առկա է փչացած սնունդ, կամ սառնարանում մթերքներ չկան, կամ մնացել է միայն մեկ Twinkies®, արդյոք եփել-թափելու նշաններ չկան:
- Չարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Ի՞նչ եք կերել այսօր: Քանի՞ կերակուր եք ուտում ամեն օր: Արդյո՞ք ունեք վատ ախորժակի խնդիր: Ի՞նչն է ձեզ համար դժվարություններ կայացնում: Լինու՞մ է ժամանակ, երբ մոռանում եք ուտել: Ձեզ մոտ երբեմն լինու՞մ է այնպիսի զգացում, որ ուտելը չափից շատ ջանք է պահանջում: Արդյո՞ք դժվար եք որոշում ինչ ուտել:
- **Կարգ 3-րդ** - Ունի օգնության կարիք ունելու ժամանակ, օր. օժանդակ սարքի հանգնելը, ըմպելիքի վերցնելը կամ սեղանին դրված ուտելիքից ավելացնելը և այլն, սակայն մեկ այլ անձի մշտական ներկայություն չի պահանջվում:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք ձեռքերի, մասնավորապես գլխավոր ձեռքի, հմտությունը տկարացած է, արդյո՞ք կան խմելու ճողիկներ կամ թափվելն արգելող կափարիչով բաժակներ, արդյո՞ք շահառուի ձեռքերը դողում են, արդյո՞ք նա ունի տեսողության լուրջ խնդիր:

- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք ունե՞ք ինքնուրույն սնվելու օգնության կարիք: Ձեզ անհրաժե՞շտ է օգտագործել հատուկ սպասք ինքնուրույն սնվելու համար: Ձեր կարծիքով բավարար չափո՞վ եք սնունդ ընդունում: Արդյո՞ք ունեք դժվարություն սնունդը ձեր ափսեի մեջ դնելու կամ ձեր բաժակը վերցնելու հարցում:
- **Կարգ 4-րդ** - Ի վիճակի է ինքնուրույն ուտել որոշ ուտելիքներ, սակայն չի կարողանում պահել սպասքը, բաժակները, գավաթները և այլն, և պահանջվում է մեկ այլ անձի մշտական ներկայությունը:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Հագուստի վրա կան սննդի հետքեր, ձեռքերը դողում են, ձեռքերը դեֆորմացված են և ունեն ափսեներ, սրբիչներ, լանջապանակ բռնելու կարողության սահմանափակում:
- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Որևէ մեկը ձեզ օգնու՞մ է ուտելուց: Ինչպե՞ս: Որքա՞ն հաճախ: Արդյո՞ք դուք սնվում եք ընտանիքի մյուս անդամների հետ միասին: Դուք կարո՞ղ եք ինքնուրույն ուտել մատներով: Դուք ի վիճակի՞ եք օգտագործել պատառաքաղ կամ գդալ: Ունե՞ք ծամելու կամ կոկ տալու դժվարություն: Եթե այո, ապա ինչպես եք լուծում այդ խնդիրը:
- **Կարգ 5-րդ** - Ընդհանրապես ի վիճակի չէ սնվել ինքնուրույն և ամբողջովին կախված է մեկ այլ անձի օժանդակությունից:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուն բոլորովին չի օգտագործում վերին վերջույթները, արդյոք շահառուի կողքին կան սկուտեղներ, սրբիչներ, լանջապանակներ և այլն:
- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Ո՞րն է ձեր ամենօրյա ռեժիմը կերակուր ուտելիս:

Սևնդի ընդունում. MPP բաժին 30-757.14(c)

<p><u>Գործերի համար անհրաժեշտ ընդհանուր ժամաքանակ</u></p>	<p><u>Գործառուրթային ցուցանիշի կարգ.</u></p>	<p><u>Համեմատում Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ</u></p>
<p>(նախքան Գործերի համար անհրաժեշտ ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի հետ համեմատելը)</p>		<p>(շաբաթական ժամեր)</p>

Շաբաթական ժամեր. _____

Կարգ 2-րդ 00:42-ից 02:18

Կարգ 3-րդ 01:10-ից 03:30

Կարգ 4-րդ 07:00-ից 03:30

Կարգ 5-րդ 05:15-ից 09:20

Արդյո՞ք անհրաժեշտ են Գործերի ժամաքանակի հաշվարկման ուղեցույցի բացառություններ:

Այո Ոչ

Նշել բացառությունների պատճառները. _____

Շնչառություն. MPP բաժին 30-757.14(b)

Շնչառությունը սահմանափակ է և կատարվում է ոչ բժշկական ծառայությունների օգնությամբ, ինչպիսիք են օգնություն թթվածինն ինքնուրույն ընդունելու և թթվածնային սարքի ու IPPB մեքենաների մաքրման համար:

Նշում. Խնամք շնչափողահատման դեպքում և ներծծում: Եթե շահառուի՝ շնչառության հետ կապված մարդկային օգնության բոլոր կարիքները բավարարվում են շնչափողահատման խնամքի և ծծելով ներս քաշելու Չարբժշկական ծառայություններով, ապա շահառուն պետք է դասակարգվի «1» կարգով, քանի որ այս խնամքն ավելի շուտ հարբժշկական ծառայություն է, քան շնչառական ՏԵՍ MPP բաժին 30-756.42.

- Կարգ 1-ին** - Չի օգտագործում շնչառական դիմակ կամ թթվածնի ընդունման այլ սարք կամ ի վիճակի է ինքնուրույն օգտագործել կամ մաքրել դրանք:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք կա թթվածնի սարք, արդյոք շահառուն չափից շատ հագում է կամ շնչում է խզալով կամ արդյոք շնչառությունը դժվարացած է:
- Չարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք ի վիճակի՞ եք մաքրել և ապահովել սարքի խնամքն ինքուրույն:
- Կարգ 5-րդ** - Ունի շնչառական սարքերն ինքուրույն օգտագործելու և(կամ) մաքրելու օգնության կարիք:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե վերոնշյալի դեպքում և երբ շահառուն շարժվում է, արդյո՞ք ունի դժվարացած շնչառություն կամ հնում է: Դիտարկել շահառուի դեղորայքը, արդյոք շահառուն ունի թուլություն կամ անշարժություն կապված շնչառական խնդիրների հետ, արդյոք թթվածնային սարքի մատակարարից ստացվել է տեղեկատվություն, որ շահառուն պատշաճ կերպով չի խնամում սարքը:
- Չարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք ի վիճակի՞ եք մաքրել և ապահովել սարքի խնամքն ինքուրույն: Եթե ոչ, ապա ինչպես է դա իրականացվում: Որքա՞ն հաճախ եք

օգտագործում սարքը: Ուենեցե՛լ եք դժվարությունն ձեր սեփական թթվածինն ընդունելիս կամ ձեր շնչառական սարքն օգտագործելիս (եթե այո, ուղղամասիրել Չարբժշկական ծառայությունները): Ո՞վ է մաքրում սարքը ձեր օգտագործումից հետո:

Մտավոր կարողությունների գնահատում

(մտավոր կարողությունների յուրաքանչյուր սահմանափակման համար կատարել նշում միայն մեկ վանդակում)

Հիշողություն

Յուրացրած վարքագծի և հեռավոր անցյալի ու վերջին շրջանի տեղեկատվության մտաբերում:

- Կարգ 1-ին** - Խնդիր չկա. Հիշողությունը պարզ է: Շահառուն ի վիճակի է տրամադրել ձեզ ճշգրիտ տեղեկատվություն իր հիվանդությունների պատմության մասին, համապատասխանորեն կարող է խոսել ավելի վաղ զրույցում ձեր արած մեկնաբանությունների շուրջ, լավ վերհիշում է անցյալի իրադարձությունները: Շահառուն ի վիճակի է տալ մանրամասն տեղեկատվություն ի պատասխան ձեր հարցերին:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք ձեր հարցերին շահառուի տված պատասխանները ցույց են տալիս, որ նա լավ վերհիշում է անցյալը, գիտի իր բժիշկների անունները, գիտի իր կամ որևէ մոտ ընկերոջ հեռախոսահամարը, հստակ պատկերացում ունի եկամտի աղբյուրների և գույքի վերաբերյալ, գիտի, թե ովքեր են մոտ բարեկամները և որտեղ են նրանք ապրում: Դիտարկել, թե արդյո՞ք շահառուի մտավոր կարողությունները թույլ են տալիս նրան կատարել առօրյա գործեր, արդյո՞ք նա ունի սոցիալական շփման լավ հմտություններ, արդյո՞ք շահառուն գործընթացի ժամանակ արտահայտվում էր պարզ և արդյո՞ք նա կարող է հետևել զրույցի թեմային:
- Օրինակ. Իր տանն ապրող տարեց կինը ձեր հարցերին պատասխանում է արագ և վստահ՝ IHSS-ի համար իր իրավունակությունը հաստատելու և ծառայությունների համար իր կարիքը սահմանելու համար: Շահառուն ողջամտորեն կազմակերպված է: Նրա դեղերը տեղում են: Փոստարկղում կան կնքված հաշիվներ: Աղբը կարծես թե կանոնավոր կերպով թափվում է: IHSS խնամատուի համար պատրաստ կա գնումների ցուցակ:

- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Ո՞վ է ձեր բժիշկը: Ի՞նչ դեղորայք են ընդունում կանոնավոր կերպով: Ո՞րն է ձեր հեռախոսահամարն ու հասցեն: Ե՞րբ եք ծնվել: Ո՞րտեղ եք ծնվել: Այսօր ի՞նչ ամսաթիվ է: Որքա՞ն ժամանակ եք ապրել այս տանը: Ո՞րտեղ եք ապրել նախքան այստեղ ապրելը: Ի՞նչ լուրջ հիվանդություններ կամ վիրահատություններ եք ունեցել: Որքա՞ն ժամանակ առաջ է եղել յուրաքանչյուր հիվանդությունը կամ վիրահատությունը:
- **Կարգ 2-րդ** - Հիշողության կորուստը մեղմ է կամ ընդհատումներով է. շահառուն դրսևորում է որոշակիորեն տկարացած հիշողություն, սակայն ոչ այն չափով, որը վտանգավոր լինի նրա համար: Շահառուն ունի առօրյա գործերի մասին ժամանակ առ ժամանակ հիշեցնելու կարիք կամ օգնություն անցյալի իրադարձությունները վերհիշելու համար:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք շահառուն մոռացկոտ է երևում և ունի որոշակի դժվարություն անունները, ամսաթվերը, հասցեները և հեռախոսահամարները հիշելիս, արդյո՞ք շահառուի ուշադրությունը և կենտրոնացումը անբավարար են, արդյո՞ք շահառուն անհանգիստ է, խոժոռում է դեմքը հավանաբար վերհիշելու համար, արդյո՞ք շահառուն կրկնում է արտահայտությունները և տալիս է նույն հարցերը, արդյո՞ք շահառուն երբեմն մոռանում է ընդունել դեղորայքը կամ չի կարողանում վերհիշել, թե երբ է վերջին անգամ ընդունել այն և արդյո՞ք խնդիրը լուծվում է Medi-Set-ի (դեղահաբերի բաշխման տուփ) օգտագործմամբ, որում դեղերը դասավորումը է մեկ ուրիշը: Դիտարկել, թե արդյոք շահառուն մանրամասներ հարցնելու ժամանակ կարող է դառնալ մտահոգ կամ ծանրաբեռնված, արդյոք շահառուի վերհիշելու գործընթացը բարդացնում է մտավոր խառնաշփոթությունը կամ պատճառում է հիշողության պարբերական կորուստ, արդյոք շահառուն միջին աստիճանի շփոթված է դառնում, երբ առօրյա գործերը փոխվում են:
- Օրինակ. Տարեց տղամարդուն ժամանակ առ ժամանակ իր կինը պետք է հիշեցնի, երբ նա փորձում է պատասխանել ձեր հարցերին: Նա ներողություն է խնդրում հիշողությունը մթազնելու համար կամ փորձում է թաքցնել այն:
- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Ո՞րն է ձեր ծննդյան տարին: Դուք քանի՞ տարեկան եք հիմա: Քանի՞ տարեկան եք եղել դուք, երբ ծնվել է ձեր առաջին երեխան: Ի՞նչ դեղորայք

եք ընդունում: Պատմեք ինձ, թե ինչով եք սովորաբար զբաղվում օրվա ընթացքում: Ո՞վ է զանգահարում ձեզ կամ զայիս է ձեզ հաճախ տեսակցության: Ի՞նչ եք ուտելու այսօր երեկոյան:

- **Կարգ 5-րդ** - Հիշողության զգալի պակաս. շահառուն մոռանում է սկսել կամ ավարտել ամենօրյա կեցողային գործերը, որոնք կարևոր են նրա առողջության և/կամ անվտանգության համար: ձեզ հետ զրույցում շահառուն չի կարողանում պահպանել մտքի շարունակականությունը:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե ժամանակի մեծ մասում ինչպիսի՞ն է շահառուի դեմքի արտահայտությունը՝ բացակայող հայացքով, թե՞ բարյացակամ, արդյո՞ք նա սենյակում շարունակաբար տեղափոխում է առարկաները ձեր հարցերին պատասխանելուց խուսափելու համար, արդյո՞ք նա հարցերին տալիս է ոչ ադեկվատ պատասխաններ, արդյո՞ք շահառուի ձայնը և/կամ մտքի թելը կտրվում է զրույցի ընթացքում, արդյո՞ք նա սկսում է որևէ գործողություն և մոռանում է ավարտել այն, արդյո՞ք շահառուն մշտապես մոռանում է ընդունել դեղերը կամ դրանք ընդունում է ոչ համապատասխանորեն՝ անգամ Medi-Set-ի օգտագործմամբ: Սահմանել, թե արդյոք երբևէ եղել է, որ շահառուն միացված թողնի սալօջախը կամ բաց թողնի լվացարանի կամ լոգարանի ջրի ծորակը՝ առաջացնելով ջրողողումներ: Դիտարկել, թե արդյո՞ք շահառուն մոռանում է, թե երբ է նա վերջին անգամ կերել կամ ինչ է կերել, արդյո՞ք նա անկարող է հիշել մոտ բարեկամների անունները, ունի խոսելու ունակության կորուստ, մտավոր խնդիրներ, դրսևորում է ոչ նորմալ և հավանականորեն վտանգավոր վարքագիծ:
- Օրինակ. Միջին տարիքի տղամարդ, ով տառապում է Ալցհայմերի հիվանդությամբ, բոլորովին ունակ չէ պատասխանելու ձեր հարցերին: Նա առանց հիմնավոր պատճառի դառնում է շատ դյուրագրգիռ, բարձրանում է աթոռից կարծես սենյակը լքելու համար և ընկնում է մոլորության մեջ, ունի ուղեկցության կարիք դեպի աթոռը վերադառնալու համար: Նրան կարծես առօրյա կենցաղային գործերը չեն մտահոգում, և նա չի կարողանում հստակ ձևակերպել ծառայությունների իր կարիքը: Նրա առօրյան ունի նստակյաց, առանց խոսելու պատկեր: Իրավիճակին նա վերաբերվում է մակերեսայնորեն:

- Չարքեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Ի՞նչ են ձեր ամենամոտ բարեկամների անունները և ի՞նչ հարաբերություն ունեք դուք նրանց հետ: Դուք այսօր նախաճաշե՞լ եք: Ի՞նչ եք կերել: Կարո՞ղ եք ինձ ասել, թե ինչ եմ պահել ձեռքումս: Դուք քանի՞ տարեկան եք: Ո՞րն է ձեր ծննդյան ամսաթիվը: Չարքեր տանը բնակվող մեկ այլ անձի. Ի՞նչ է պատահում, երբ շահառուն մտում է մենակ: Արդյո՞ք նա հիշում է անցած օրվա, մեկ ժամ կամ մեկ րոպե առաջվա իրադարձությունները: Նա հիշու՞մ է, թե ով եք դուք: Նա հիշու՞մ է, թե ինչպես պետք է անվտանգ կերպով օգտվել սալօջախից, սափրվել ինքնուրույն կամ կատարել այլ գործեր:

Կողմնորոշում

Որևէ միջավայրում ժամանակի, վայրի, սեփական անձի կամ այլ անձանց իմացություն:

- **Կարգ 1-ին** – Խնդիր չկա. Կողմնորոշումը հստակ է: Շահառուն տեղյակ է, թե որտեղ է գտնվում և կարող է տալ ձեզ հուսալի տեղեկատվություն, երբ հարցնեք առօրյա կենցաղային գործերի, ընտանիքի և այլնի մասին, ունի օրվա մեջ ժամանակի զգացողություն:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուին հարմար և ծանոթ է թվում իրեն շրջապատող միջավայրը: Շահառուն ձեզ հետ պահպանում է լավ տեսողական կոնտակտ: Նրա դեմքի արտահայտությունը զգոն է և համապատասխանում է իրավիճակին: Շահառուն սպոնտան է և ուղիղ: Շահառուն ցուցաբերում է հետաքրքրություն արտաքինը լավ պահպանելու հարցում: Շահառուն ակնհայտորեն գիտակցում է իրականությունը, ունի ժամանակի և վայրի զգացողություն, պատրաստակամորեն պատասխանում է իր կենսակերպի, ընտանիքի մասին հարցերին, ամբողջովին տեղյակ է ձեր այցի նպատակին: Սահմանել, թե արդյոք շահառուն ֆիզիկապես ի վիճակի է դուրս գալ տանից առանց ուղեկցության և արդյոք շահառուն կարող է գտնել հետադարձի ճանապարհն առանց մոլորվելու և տեղ հասնել՝ օգտվելով հասարակական տրանսպորտից:
- Օրինակ. Շահառուն պատրաստ է և սպասում է ձեր այցին: Նա սկսում է սոցիալական շփման ձևեր դրսևորել, օրինակ առաջարկում է սուրճ, աթոռ նստելու համար և այլն: Շահառուն ներկայացնում է

ընտանիքի անդամներին և(կամ) հարցնելու դեպքում կարող է ճանաչել ընտանեկան լուսանկարները և պատրաստել է ձեր խնդրած փաստաթղթերը:

- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք ունե՞ք ձեզ մոտ ապրող բարեկամներ: Ինչո՞ւ եք հիմա դիմում օգնության համար: Ինչպե՞ս եք մինչ օրս հոգ տարել ինքներդ ձեր մասին: Կա՞ որևէ մեկը, ով օգնում է ձեզ տան գործերում:
- **Կարգ 2-րդ** – Հազվադեպ ապակողմնորոշումն ու շփոթությունը ակնհայտ են, սակայն նրան վտանգի չեն ենթարկում. շահառուն ունի օրվա մեջ ժամանակի ընդհանուր զգացողություն, կարող է տրամադրել սահմանափակ տեղեկություններ ընտանիքի, ընկերների, տարիքի, առօրյա գործերի և այլնի մասին:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք շահառուի արտաքինը կոկիկ չէ, իսկ շրջապատում քառս է տիրում: Դիտարկել, թե արդյո՞ք առարկաները սխալ կամ ոչ համապատասխան տեղերում են դասավորված, արդյո՞ք խոհանոցում կամ խոհանոցից դուրս կա բորբոսնած մտուռ, արդյո՞ք շահառուն չի նկատում, որ տունը չափից շատ կամ չափից քիչ է ջեռուցվում, քանի դեռ չէք ասել իրեն այդ մասին, արդյո՞ք շահառուն իրեն ծանոթ միջավայրում և մի քանի մոտ ընկերների հետ ավելի քիչ է շփոթվում, արդյո՞ք շահառուն կարողանում է պահպանել սոցիալական շփումը միայն սահմանափակ կամ ընդհատական մակարդակով, արդյո՞ք շահառուն կարողանում է տրամադրել որոշակի տեղեկատվություն, սակայն ժամանակ առ ժամանակ շփոթվում է և անորոշություն է ցուցաբերում, արդյո՞ք շահառուն ոչ միշտ է տեղյակ ժամանակից, շրջապատող միջավայրից և մարդկանցից, արդյո՞ք շահառուն կարողանում է պատասխանել, երբ նրան ուղղություն են ցույց տալիս կամ հիշեցնում են:
- Օրինակ. Նախորդ տարի երկու անգամ շահառուն իր դստերը կանչել է գիշերվա ժամը 2:00-ին և չի իմացել, որ կեսգիշեր է: Երբ նրան ասել են ժամը քանիսն է, շահառուն ներողություն է խնդրել և վերադարձել է անկողին: Երբ դուք մտնում եք շահառուի տուն, տարեց կինը հարցնում է. «Ինչո՞ւ եք եկել այսօր: Դուք ասել եք, որ գալու եք երեքշաբթի օրը»: Դուք պատասխանում եք. «Այսօր երեքշաբթի է»: Երևում է, որ շահառուն պատրաստված չի ձեր այցին և դժվարանում է սկսել հարցազրույցը: Նա

մասնակցում է որոշակի դժվարությամբ: Նա իր անմիջական միջավայրից դուրս իրեն հարմարավետ չի զգում և հազվադեպ է հայացքն ուղղում խոսողին: Նրա փոստարկը երբեմն մնում է չբացված, իսկ նրա հագուստը և որոշակի շուտ փչացող մթերքներ կարգին չեն տեղավորված:

- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Այսօր ի՞նչ օր է: Քանի՞ սենյակ ունեք ձեր տանը: Ո՞րտեղ է գտնվում ամենամոտ մթերային խանութը: Դուք գիտե՞ք, թե ով եմ ես և ինչու եմ այստեղ: Դուք տանից մենակ դուրս գալի՞ս եք: Դուք երբևէ մոլորվե՞լ եք, երբ տանից մենակ դուրս եք եկել: Դուք գիտե՞ք այն ավտոբուսի անունը, որը նստում եք խանութ գնալու համար և ո՞րտեղ է տուն գնալու ավտոբուսի կանգառը: Ո՞ր ամսում, տարում, եղանակում ենք հիմա, ի՞նչ տոն է հիմա:
- **Կարգ 5-րդ** – Ապակողմնորոշման լուրջ խնդիր, որը շահառուին վտանգի է ենթարկում. շահառուն թափառում է, չունի անվտանգության կամ լավ ինքնազգացողության գիտակցում կամ մտահոգություն, ի վիճակի չէ ճանաչել ուրիշներին կամ ապահով կերպով վերաբերվել միջավայրին կամ իրավիճակին, չունի օրվա մեջ ժամանակի զգացողություն:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք շահառուն աննպատակ թափառում է տնով մեկ, արդյո՞ք նա ցուցաբերում է անհապատասխան վարք, օրինակ քնծիծաղում է կամ անում է զրույցին չհամապատասխանող մեկնաբանություններ, արդյո՞ք նա զգուշորեն է վարվում իրերի հետ, ունի փնթի տեսք, անձնական հիգիենան վատ է պահպանում, ունի այնպիսի հագուկապ, որն անհամապատասխան է կամ տարօրինակ, արդյո՞ք պատահեց այնպես, որ երբ սոցիալական աշխատողը փորձել էր բարևել շահառուին ձեռքի սեղմումով, շահառուն փորձել է կծել սոցիալական աշխատողի ձեռքը: Դիտարկել, թե արդյոք շահառուն շատ շփոթված է, չունի ժամի, վայրի զգացողություն, չի ճանաչում մարդկանց, գնում է փոստատուն և չի կարողանում գտնել իր բնակարանի հետադարձ ճանապարհը, չի ճանաչում բնակարանի կառավարչին, երբ նա փորձում է օգնել շահառուին գտնելու տունդարձի ճանապարհը, և շահառուն դառնում է խիստ անհանգստացած: Դիտարկել, թե արդյո՞ք շահառուն ապակողմնորոշված տեսք ունի և զգայապատրանքներ է (հայրուցինացիա) ունենում, ցուցաբերում է ապշած ու շփոթված հոգեվիճակ, չի կարողանում ադեկվատ կերպով պատասխանել պարզ հարցերին, արդյո՞ք շահառուի քնելու և արթնանալու ցիկլը կարող է նորմալ չլինել, արդյո՞ք շահառուն իր հետ անմիջականորեն բնակվող հարազատներին (որդի/դուստր)

շփոթում է մահացած հարազատների (ամուսին և այլն) հետ, արդյո՞ք առկա է հոգեկան անկայուն վիճակ:

- Օրինակ. Ընտանիքի անդամը կամ ընկերը պետք է պատասխանեն դռան զանգերին, քանի որ շահառուն չի կարողանում մանևրել տանն առանց թափառելու: Շահառուին պետք է ուղղորդել դեպի իր աթոռը: Շահառուն սոցիալական աշխատողի այցի նպատակի վերաբերյալ իմանալու որևէ նշան չի ցույց տալիս: Շահառուն չի կարողանում կենտրոնանալ, չի պատասխանում հարցերին կամ խոսում է անհասկանալի:
- Յարգել, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Ի՞նչ է ձեր անունը: Որտե՞ղ եք բնակվում Այսօր ի՞նչ ամսաթիվ է: Այժմ ո՞ր տարին է: Ո՞րտեղ եք դուք: Ու՞ր եք գնում: Եթե շահառուն չի կարողանում պատասխանել կամ պատասխանում է անհամապատասխան, հարցրեք իր հետ տանը բնակվող անձին. Ի՞նչ բնույթի է _____ի մտավոր խնդիրը: Ի՞նչ կարող է անել իր համար շահառուն: Ի՞նչ է անում շահառուն, երբ մնում է մենակ:

Դատելու կարողություն

Կայացնել որոշումներն այնպես, որ սեփական անձը կամ գույքը վտանգի չենթարկվի: Շահառուն ցուցաբերում է անվտանգություն սալօջախի շուրջը: Շահառուն ունակ է արձագանքել միջավայրի փոփոխություններին (օր. հրդեհ, ցուրտ տուն): Շահառուն հասկանում է այլընտրանքները և ռիսկերը և ընդունում է որոշումների հետևանքները:

- Կարգ 1-ին** – Դատելու կարողությունը վնասված չէ. Ի վիճակի է գնահատել միջավայրի ազդակները և արձագանքել համապատասխանաբար:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք տունը պահպանված է համապատասխան կերպով և ապահով է, արդյո՞ք շահառուի պատասխանները ցույց են տալիս, որ որոշում կայացնելու ունակությունը նորմալ է, արդյո՞ք շահառուն հագնված է եղանակին համապատասխան, արդյո՞ք շահառուն կարողանում է կատարել ճիշտ եզրահանգումներ փորձից

ստացված գիտելիքից, արդյո՞ք շահառուն կարող է կայացնել անկախ որոշումներ և կարողանում է շփվել այլ մարդկանց հետ:

- Օրինակ. Շահառուն հպարտություն է զգում իր սեփական գործերը կազմակերպելու համար և անում է դա ադեկվատ կերպով: Շահառուն ունի հեռախոսահամարների ցուցակ արտակարգ իրավիճակում զանգահարելու համար, ձեռնարկում է անվտանգությունը պահպանող միջոցառումներ, օրինակ կողպում է դռները, ներս չի թողնում օտարներին և այլն:
 - Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Դուք ունե՞ք հեռախոսահամարների ցուցակ, որոնցով կարող եք զանգել արտակարգ իրավիճակի դեպքում: Դուք ունե՞ք ընկերներ կամ ընտանիք, ովքեր կկարողանան օգնել ձեզ ճգնաժամային իրավիճակում: Ի՞նչ կանեիք դուք, եթե ձեր խնամատուն մի օր չկարողանար գալ աշխատանքի:
- Կարգ 2-րդ** – Դատելու կարողությունը թեթևակի տկարացած է. ցույց է տալիս սեփական անձի համար պլանավորման կարողության պակաս, ունի այլընտրանքների միջև որոշում կայացնելու դժվարություն, սակայն լսում է խորհուրդներ, սոցիալական դատողությունը թույլ է:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյո՞ք տանը կան նորոգման ենթակա հատվածներ (օր. արտահոսող ծորակներ, կոտրված պարազաներ, ոչ նորմալ լուսավորություն և այլն), արդյո՞ք տան քայլելու հատվածներում կան թափված աղբի կտորներ, արդյո՞ք տանը եղած սնունդն ունի վատ սննդային արժեք, արդյո՞ք շահառուն անկարող է հասկանալ, որ կան այլընտրանքներ և ի վիճակի չէ ընտրել դրանց միջև և չի կարողանում պլանավորել կամ կանխատեսել որոշումների հետևանքները: Դիտարկել, թե արդյոք շահառուն ի վիճակի չէ որոշումներ կայացնել առանց մեկ ուրիշի խորհրդի, անկարող է հասկանալ տարբերակները, երբ դրանք բացատրվում են, կատարել ճիշտ ընտրություններ, գիտի բավականաչափ, որպեսզի կարողանա միացնել և անջատել սալօջախը:
 - Օրինակ. Շահառուն գումարը ծախսում է անօգուտ բաների վրա՝ մատնելով նորոգման ենթակա իրերն անուշադրության: Շահառուն «գոհ» է տան վիճակից անգամ, եթե շահառուի համար հարմար չէ: Շահառուն կարծես «կուտակող» է, դժվարանում է որևէ բան դնել նետել անգամ, եթե տանը անցնելու

տեղ չկա: Շահառուն չի կարողանում որոշել, թե որ խնամատուին է ինքը ուզում: Խնամատուի համար նախատեսված գնումների ցուցակը մեծ մասամբ պարունակում է ոչ առողջ սնունդ: Շահառուն դադարել է տնային կերակուրներ ուտելը, երբ աղ ավելացնելու փոխարեն որոշել է, որ դրանք դրանք համեղ չեն: Նա հրաժարվում է օգտագործել քայլակ կամ ձեռնափայտ:

- Յարգել, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Ու՛մ կզանգահարեիք արտակարգ իրավիճակի դեպքում: Եթե որևէ մեկը, ում դուք չեք ճանաչում, գա գիշերով ձեր դռան մոտ, ի՞նչ կանեք: Ի՞նչ եք կարողանում անել ինքների ձեզ համար: Ձեզ անհրաժեշտ է մեկը, որ օգնի ձեզ: Դուք ու՛մ կարող եք դիմել, որպեսզի օգնի ձեզ, երբ տանը որևէ բան նորոգելու կարիք լինի, օրինակ երբ ձեր ջեռուցիչը չաշխատի:
- **Կարգ 5-րդ** – Դատելու կարողությունը զգալի տկարացած է. շահառուն չի կարողանում որոշումներ կայացնել կամ կայացնում է որոշումներն առանց անվտանգությունը կամ բարեկեցությունը հաշվի առնելու:
- Սոցիալական աշխատողի դիտարկում. Դիտարկել, թե արդյոք կան ակնհայտ անվտանգության սպառնալիքներ. հագուստի վրա կան այրվածքից առաջացած անցքեր, հոսանքի լարերը վնասված են, կա գազի արտահոսք, սալօջախն այրված է և այլն: Դիտարկել, թե արդյո՞ք կոմունալ ծառայությունները անջատված են, արդյո՞ք սնունդը բավարար չէ կամ ուտելու համար պիտանի չէ: Արդյոք շահառուն ունի տնային կենդանի, դիտարկել, արդյոք տանը կա կենդանու արտաթորանք: Դիտարկել, թե արդյոք շահառուն ակնհայտորեն տեղյակ չէ վտանգավոր իրավիճակների մասին, ինքնուրույն չի ուղղորդվում, մտավոր կարողությունները թույլ չեն տալիս կատարել ամենօրյա տան գործերը, տանից դուրս է գալիս առանց հագուստի, արդյոք հարևանները մի քանի անգամ տեսել են, որ տանից ծուխ դուրս գա, արդյոք նրանք մտել և մարել են սալօջախի կրակը, արդյոք համայնքից որևէ մեկը հայտնում է, որ շահառուն արտաթորում կամ միզում է դիմացի բակում: Դիտարկել, թե արդյո՞ք շահառուն չի կարողանում որոշել ուտել, հագնել կամ ընդունել դեղերը, արդյո՞ք շահառուն խուճապահար, շփոթված կամ վախեցած տեսք ունի, արդյո՞ք շահառուն տեղյակ չէ կամ չափից թույլ է կամ անկարող է, որպեսզի սեփական տանը անվտանգությունը պաշտպանող որոշումներ կայացնի, արդյո՞ք նա ցնցուղ է ընդունում հագուստով, խմում է թափված կաթը և այլն:

- Օրինակ. Շահառուի տունը բաց է բոլոր նրանց համար, ովքեր մոտենում են տանը: Շահառուի վրա կարծես չի ազդում աղբից, արտաթորանքից, մեզից և այլնից առաջացած գարշահոտությունը կամ վատ հոտերը, ակնհայտորեն որևէ մտահոգություն չի արտահայտում անվտանգությանը սպառնացող վտանգների նկատմամբ (օր. սալօջախի մոտ սղոցած երկաթի կտորներ, ջերմության մոտ կտրտած թղթեր և այլն), ուշադրություն չի դարձնում վնասվածքներին, օրինակ այրվածքներին: Նախորդ տարի շահառուն սովորականի պես ընթերել է և քուն է մտել, այնուհետև զարթնել է ծխով լցված խոհանոցում:
- Հարցեր, որոնք կարող է տալ սոցիալական աշխատողը. Ի՞նչ կանեիք դուք, եթե տեսնեք, որ ձեր տանը ինչ-որ բան կրակի վրա է: Եթե ձեզ անհրաժեշտ է գնալ բժշկի, ի՞նչ եք անում այդ ժամանակ: Հարցեր տանը բնակվող մեկ այլ անձի. Ի՞նչ է պատահում, երբ _____ը մենակ է մնում: Նա կարո՞ղ է հասկանալ վտանգի ենթարկող իրավիճակները: Արդյո՞ք նա կարող է կայացնել ռացիոնալ որոշումներ:

Առաջադրանքի ոլորտ

Շաբաթական ժամեր

Ուղեկցում բժշկի այցելելիս. Նշեք բժշկական այցելությունների համար շաբաթական անհրաժեշտ ժամաքանակը, ճանապարհի հեռավորությունը և սպասելաժամանակը (խնամատուները կարող են վճարվել շահառուին բժշկական հաստատություն այցելություն կատարելիս ուղեկցելու համար, եթե խնամատուն կատարում է իր «աշխատանքային պարտականությունը», այսինքն՝ խնամատուից պահանջվել է մնալ, որովհետև նա պետք է ցանկացած պահի օգնի շահառուին տուն վերադառնալ: Մանրամասն տեղեկատվությունը տե՛ս «IHSS խնամատուի սպասելաժամանակը և երթևեկելու ժամանակը» մեր հրապարակումը, որը հասանելի է այստեղ):

Անհրաժեշտ միջին ժամաքանակ. Սեղմեք կամ հպեք այստեղ տեքստը մուտքագրելու համար:

Ուղեկցում այլընտրանքային ռեսուրսների դիմելիս. Նշեք այլընտրանքային ռեսուրսների կատարած այցերի շաբաթական քանակը և ճանապարհի հեռավորությունը: Տրամադրվում է միայն տանից գնալու և տուն վերադառնալու համար անհրաժեշտ ժամանակը:

Անհրաժեշտ միջին ժամաքանակ. Սեղմեք կամ հպեք այստեղ տեքստը մուտքագրելու համար:

Պաշտպանիչ հսկողություն (տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպության հրապարակումը այս ծառայությունն ստանալու վերաբերյալ): Բացատրել. 1) շահառուի հաշմանդամություն, 2) գործառույթային սահմանափակում, օրինակ՝ հիշողություն, կողմնորոշում և դատելու կարողություն (այնպիսի որոշում կայացնելու կարողություն, որը կապահովի շահառուի անվտանգությունը), ինչպես նաև ֆիզիկական գործառույթային սահմանափակում, 3) շահառուի՝ վարքագծի/որոշման հետևանքները հասկանալու ունակություն, 4) վարքագծեր, որոնք շահառուին վտանգի կենթարկեն կամ վնասվածք և/կամ վնաս կպատճառեն:

Հարբժշկական (պահանջվում է բժշկի և շահառուի կողմից լրացված SOC 321 ձևը). Բացատրություն ծառայության ժամաքանակի անհրաժեշտության և դրա հաճախականության վերաբերյալ:

Անհրաժեշտ միջին ժամաքանակ. Սեղմեք կամ հպեք այստեղ տեքստը մուտքագրելու համար:

Ուսուցում և ցուցադրում (տրամադրվում է մինչև երեք ամիս ժամանակ սեփական անձի մասին ինքնուրույն հոգալ սովորեցնելու համար, եթե ողջամտորեն ակնկալվում է, որ IHSSի կարիքը կկրճատվի). Ուսուցանվող առաջադրանքների բացատրությունը, ուսուցման օգտագործվող մեթոդը, հաճախականությունը և ուսուցման տևողությունը: ↓

Անհրաժեշտ միջին ժամաքանակ. Սեղմեք կամ հպեք այստեղ տեքստը մուտքագրելու համար:

Բակի վտանգների նվազեցում / Ձյան մաքրում (ծառայությունները սահմանափակ են, Տե՛ս MPP բաժին 30-757.16)

Անհրաժեշտ միջին ժամաքանակ. Սեղմեք կամ հպեք այստեղ տեքստը մուտքագրելու համար:

Այլընտրանքային ռեսուրսներ

Արդյո՞ք վարչաշրջանը գտել է որևէ մեկին կամ որևէ գործակալության կամ կազմակերպության, որը պատրաստ է տրամադրել IHSS ծառայություններն անվճար:

Շրջանակի մեջ առեք ներքևի պատասխաններից որևէ մեկը ↓

Այո կամ Ոչ

Եթե ԱՅՈ. վարչաշրջանից պահանջվում է ստանալ ստորագրված հայտարարություն (ձև SOC 450) խնամատուից, որում երևում է, որ խնամատուն գիտի IHSS-ի կողմից վարձատրվելու իրավունքի մասին, սակայն ինքնակամ կերպով ընտրում է չընդունել վարձատրությունը: Տե՛ս MPP բաժին 30-757.176.
Վարչաշրջանը կարող է կրճատել ժամերը այլընտրանքային ռեսուրսի պատճառով՝ մինչև SOC 450 ձևը լրացվի և ներառվի IHSS հայցորդի պանակում:

Մենք ցանկանում եք լսել ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Անցնել հարցումը\]](#)

Իրավաբանական օգնություն ստանալու համար զանգահարել 800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացնել գնության դիմումի առցանց ձևը: [\[պահանջել օգնության դիմումի ձևը\]](#) Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Չյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Չարավային Կալիֆորնիա) հեռախոսահամարներով:

Կալիֆորնիայի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս հետևյալ հղումով՝ <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>.